

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՔՆԱԳԱՎԱՌԻ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՄ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ**

4 ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿ

ԵՐԵՎԱՆ 2021



Սույն հետազոտությունը կատարվել է Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնի (այսուհետ՝ ԹԻՅԿ) կողմից՝ Թրանսփարենսի Ինթերնեշլի պաշտպանություն և անվտանգություն (այսուհետ՝ ԹԻՊԱ) նախաձեռնության և Միացյալ Թագավորության արտաքին գործերի, համագործակցության և զարգացման նախարարության աջակցությամբ:

Բովանդակության պատասխանատուն ԹԻՅԿ-ն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի դոնոր կազմակերպությունների տեսակետները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ.

4 ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿ

Հետազոտող՝ Արտակ Զյուրումյան

Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0002, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռախոս՝ (+374-10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ԱՄՓՈՓԱԳԻՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ. ՀԻՄՆԱԿԱՆ «ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿՆԵՐԸ»	15
Կարմիր դրոշակ 1. Անորոշ կամ կողմնակալ տեխնիկական բնութագրեր կամ պահանջների անտեսում	15
Կարմիր դրոշակ 2. Պայմանագրային գնի էական տարբերություն շուկայական արժեքի համեմատ	19
Կարմիր դրոշակ 3. Ընտրված մասնակցի փոխկապակցվածություն ՊՆ-ի կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի հետ	25
Կարմիր դրոշակ 4. Անարոյունավետ պլանավորում և ոչ պաշտոնական ձեռքբերումներ	30
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33
ՀԱՎԵԼՎԱԾ. Գնումների գործընթացի յուրաքանչյուր փուլի վերահսկողական հարցադրումներ	38
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԹԻ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԹԻՊԱ	ԹԻ պաշտպանության և անվտանգության ծրագիր
ԿՊՕՀ	Կառավարության՝ պաշտպանության օրինավորության համաթիվ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ԲՀԿ	Բաղաբացիական հասարակության կազմակերպություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Համաձայն Թրանսփարենսի Ինթերնեշնլի՝ Կառավարության՝ պաշտպանության օրինավորության համաթվի (այսուհետ՝ ԿՊՕՀ) Հայաստանի պաշտպանության գնումների բնագավառը 2020թ. հետազոտության կողմից գնահատվել է «Դ» կարգում: ԿՊՕՀ-ն ցույց է տալիս, որ Հայաստանում գործող վերահսկողական և կառավարման շրջանակը բավարար չէ պաշտպանության բնագավառում իրականացվող պետական գնումներին առնչվող կոռուպցիան վերահսկելու համար: Պետական գնումները բավական թափանցիկ չեն և անհրաժեշտ չափով ենթակա չեն խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողության¹:

Սույն զեկույցը պատրաստվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլի հակակոռուպցիոն կենտրոնի կողմից 2021թ. հունվար-մարտ ամիսներին կատարված հետազոտության հիման վրա: Չեկույցի պատրաստմանն օժանդակել են Թրանսփարենսի Ինթերնեշնլի պաշտպանության և անվտանգության (այսուհետ՝ ԹԻՊԱ) ծրագիրը և Միացյալ Թագավորության արտաքին գործերի, համագործակցության և զարգացման նախարարությունը:

Չեկույցի նպատակն է «կարմիր դրոշակները» բացահայտելու և դրանց լուծումներ տալու միջոցով օժանդակել Հայաստանի պաշտպանության բնագավառի գնումների բարեփոխումներին: «Կարմիր դրոշակներն» այն ցուցիչներն են, որոնք ազդարարում են կոռուպցիոն երևույթների հավանականությունը, նախազգուշացնում են կոռուպցիոն ռիսկերի նյութականանալու հավանականության մասին և քաղաքական գործիչներին, իրավապահներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, հետաքննող լրագրողներին և այլ շահառուների հուշում են, որ լրացուցիչ ուսումնասիրություն է պահանջվում կոռուպցիոն գործարքը կանխելու կամ տեղի ունեցած դեպքերի մեղավորներին հետապնդելու համար:

Չեկույցն անդրադառնում է գնումների գործընթացներում վերհանված կարմիր դրոշակներին վերաբերող իրավակարգավորման շրջանակին, նկարագրում է այն դեպքերը, որտեղ վեր են հանվել կոռուպցիոն դրսևորումները և առաջարկում է մեծացնել տեղեկատվության շրջանակը, որը կարող է բարելավել հաշվետվողականությունը և այդպիսով նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը: Ի լրումն, զեկույցն առաջարկում է ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ բարելավելու հսկողությունն ու վերահսկողությունը և բացահայտելու գնումների ամբողջ գործընթացում առկա խնդիրները:

Հետազոտության շրջանակներում բացահայտվել են հետևյալ «կարմիր դրոշակները».

- ▶ Կարմիր դրոշակ 1. Անորոշ կամ կողմնակալ տեխնիկական բնութագրեր կամ պահանջների անտեսում
- ▶ Կարմիր դրոշակ 2. Պայմանագրային գնի էական տարբերություն շուկայական արժեքի համեմատ

¹ Թրանսփարենսի Ինթերնեշնլի պաշտպանության և անվտանգության (ԹԻՊԱ) ծրագիր, Կառավարության՝ պաշտպանության օրինավորության համաթիվ. Հայաստան, 2020թ. դեկտեմբեր, <https://ti-defence.org/qdi/countries/armenia>

- ▶ Կարմիր դրոշակ 3. Ընտրված մասնակցի փոխկապակցվածություն ՊՆ-ի կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի հետ
- ▶ Կարմիր դրոշակ 4. Անարդյունավետ պլանավորում և ոչ պաշտոնական ձեռքբերումներ

Չեկույցը եզրակացնում է, որ Հայաստանի պաշտպանության բնագավառի գնումների հիմնական մասը դասակարգվում է որպես «գաղտնիք», ինչի արդյունքում շատ տվյալներ առկա չեն: Դեպքերի մեծ մասի վերաբերյալ չկա պաշտոնական տեղեկություն, թե ե՞րբ է կատարվել գնումը, ի՞նչ տեխնիկական բնութագիր է ունեցել, ովքե՞ր են մասնակցել գնման մրցույթին, արդյո՞ք պայմանագրային պարտավորությունները կատարվել են և այլն: Առանձին դեպքերի վերաբերյալ այդ տվյալները հասանելի են դարձել գնումներից բավականին ժամանակ անց՝ բողոքների, քրեական հետապնդումների դեպքում իրավապահ մարմինների հայտարարությունների, դատական գործընթացներին առնչվող փաստաթղթերի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, փորձագետների և լրատվամիջոցների հրապարակումների միջոցով: Չնայած բացահայտված հատվածական տեղեկությունները բավարար չեին գնումների գործընթացները խորությամբ վերլուծելու համար՝ Չեկույցը քննարկում է դրանց ամենախնդրահարույց մասերը՝ կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելուն միտված առաջարկներ ձևակերպելու նպատակով: Այն նաև պաշտպանության գնումների գործընթացի շահագրգիռ կողմերին հուշում է տվյալների թափանցիկություն ապահովելուն և վերահսկողությանն ուղղված անհրաժեշտ քայլեր պաշտպանության բնագավառի գնումների բարեվարքությունը երաշխավորելու համար:

Այս Չեկույցը շահագրգիռ տարբեր դերակատարներին քաջալերում է օգտագործել ներկայացված առաջարկությունները, այդ թվում՝

- **գնման մրցույթներ ու գնահատման գործընթացներ նախագծող պետական պաշտոնյաներին**՝ հավատարիմ լինել բարեվարքության չափանիշներին և ձեռնպահ մնալ խնդրահարույց որոշումներ կայացնելուց ու գործողություններ կատարելուց:
- **մասնակիցների ընտրության և պայմանագրերի կատարման նկատմամբ վերահսկողության համար պատասխանատու հաստատություններին և պաշտոնյաներին**՝ հաղթող մասնակցին ընտրելիս խուսափել հակասական իրավիճակների հանգեցնող որոշումներ կայացնելուց և հաղթողին ընտրելու գործընթացում վեր հանել խնդրահարույց վարքագծերը:
- **պատգամավորներին**՝ բարելավել օրենսդրությունը և իրենց օրենսդիր ու վերահսկողական իրավասությունների շրջանակներում՝ պատասխանատվության կանչել ՊՆ գնումների համար լիազորված պաշտոնյաներին:
- **հաշվեքննիչ պալատին և հսկողական լիազորություններով օժտված այլ պետական հաստատություններին**՝ գնումներին առնչվող որոշումների կայացման և գործողությունների կատարման ժամանակ անել ճիշտ հարցադրումներ ապօրինի գործելակերպը բացահայտելու նպատակով:

- **իրավապահ մարմիններին և մասնագետներին՝** քննել գնման կասկածելի պայմանագրերի կնքման գործընթացները:
- **բողոքներ քննողներին՝** վերլուծել բողոքները, բացահայտել խնդիրները և կայացնել համապատասխան որոշումներ:
- **պաշտպանության բնագավառի մատակարար ընկերություններին՝** երաշխավորել պատշաճ գործելակերպ (due diligence), ռիսկերի կառավարում և գործառնությունների համապատասխանություն օրենսդրության պահանջներին, ինչպես նաև մրցույթներին մասնակցելիս, այլ ընկերությունների հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս և ՀՀ ՊՆ հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելիս գնահատել կոռուպցիոն ռիսկերը:
- **քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, լրագրողներին և միջազգային դոնորներին՝** ձևակերպել գնումների գործընթացի բարեփոխումների, ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության պահանջ:

Ձեկույցի հիմնական առաջարկությունները հետևյալն են.

- **Վերանայել** պաշտպանության և անվտանգության տեսակետից զգայուն տեղեկատվությունը՝ որպես «գաղտնի» դասակարգելու կարգավորումները:
- **Կատարելագործել** պաշտպանության բնագավառի ոչ «գաղտնի» տվյալների թափանցիկությունը:
- **Բարելավել** «գաղտնի» տեղեկատվության ուսումնասիրությունը ներքին և արտաքին հսկողության մարմինների կողմից, ինչպես նաև դրանց գաղտնիության ժամկետի ավարտից հետո:
- **Ընդլայնել** գնումների նախապատրաստմանը, ներառյալ՝ պլանավորմանը, հիմնավորմանը, շուկայի վերլուծությանը, տեխնիկական բնութագրերի մշակմանը, ինչպես նաև գնման առարկայի որակի պատշաճ գնահատմանը և պաշտոնական հանձն-ընդունմանը վերաբերող իրավակարգավորումները:
- **Կատարելագործել** պայմանագրի կողմ հանդիսացող ընկերությունների իրական շահառուների վերաբերյալ տվյալների բացահայտումը և շահերի բախման կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ներգրավվածության կանխարգելումը:

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Հայերով բնակեցված Արցախի (Լեռնային Ղարաբաղ) շուրջ Ադրբեջանի հետ հակամարտության պատճառով պաշտպանության բնագավառի գնումները զգայուն թեմա են Հայաստանում: Հակամարտության զագաթնակետը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից, Թուրքիայի լիակատար օժանդակությամբ, սանձազերծած պատերազմն էր: 44-օրյա ագրեսիան դադարեց Ռուսաստանի միջնորդությամբ 2020 թվականի նոյեմբերի 9-10-ին²:

Պատերազմին նախորդող տարիներին Հայաստանի ռազմական ծախսերը աճել էին՝ 2014 թվականի ՀՆԱ 3.9 տոկոսից 2019 թվականին հասնելով 4.9 տոկոսի³: Աճը հիմնականում պայմանավորված էր Ադրբեջանի հետ սահմանին առկա լարվածությամբ, ընդ որում՝ Ադրբեջանն իր նավթային եկամուտների զգալի մասն ուղղում էր իր զինված ուժերի ընդլայնմանը և բնակչությանն ինտենսիվ կերպով պատրաստում պատերազմի:

Պաշտպանության բնագավառի կոռուպցիայի խնդիրը Հայաստանի հանրության օրակարգում է հայտնվել 2004 թվականից ի վեր, բայց հատկապես՝ 2011 թվականից, երբ քաղաքացիական հասարակության մի շարք խմբեր սկսեցին բարձրաձայնել ոչ մարտական պայմաններում մահերի պատճառների և դրանց խնդրահարույց քննության մասին: Կոռուպցիան Հայաստանի Ազգային ժողովի կողմից ստեղծված Արցախի և Ադրբեջանի սահմանին 2016 թվականի ապրիլյան 4-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի հետազոտության հիմնական թեմաներից էր: Կոռուպցիայի մասին բարձրաձայնվել է նաև 2020 թվականի պատերազմի ընթացքում և դրանից հետո՝ հարցեր առաջացնելով Հայաստանի զինված ուժերի վատ վիճակի պատճառների մասին:

Թրանսփարենսի Ինթերնեշլի՝ Կառավարության՝ պաշտպանության օրինավորության համաթվի (այսուհետ՝ ԿՊՕՀ) վերջին հրապարակման համաձայն՝ Հայաստանի պաշտպանության բնագավառը և պաշտպանության գնումները գնահատվել են «Դ» կարգում, որը ցույց է տալիս կոռուպցիոն բարձր ռիսկերը⁴:

ԿՊՕՀ-ն բացահայտել է, որ Հայաստանում առկա վերահսկողության և կառավարման շրջանակը համարժեք չէ գնումների գործընթացում կոռուպցիայի նկատմամբ հսկողությունն իրականացնելու համար: Այն ցույց է տալիս, որ երկիրը չունի գնումների պլանավորման հանրամատչելի գործընթաց, որը կենթադրեր հստակ արտաքին վերահսկողություն կամ գնումները կկապեր ազգային անվտանգության ռազմավարության հետ: Գնումների գործընթացի վերահսկողությունը կաշկանդված է գաղտնիության պահանջներով, որոնք եականորեն սահմանափակում են հանրությանը հասանելի տեղեկատվությունը:

² Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի, Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի և Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ստորագրված եռակողմ հայտարարություն, 10 նոյեմբերի 2020թ., <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement>

³ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտ, Ռազմական ծախսերն ըստ երկրների՝ որպես ՀՆԱ տոկոս, 1988-2019թթ., 2020թ., <https://bit.ly/3nvxx6i>

⁴ ԹԻՊԱ, ԿՊՕՀ. Հայաստան, 2020թ. դեկտեմբեր, <https://ti-defence.org/qdi/countries/armenia>

Ազգային ժողովը որևէ նշանակալի դեր չի խաղում պաշտպանության գնումների վերաբերյալ որոշումների կայացման կամ դրանց նկատմամբ վերահսկողության գործում⁵: Այս բնագավառի նկատմամբ թույլ վերահսկողությունը պայմանավորված է ինչպես Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովի անբավարար կարողություններով, այնպես էլ գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ավանդույթի բացակայությամբ: Դա, իր հերթին, պայմանավորված է նրանով, որ 2015 թվականի վերջին կայացած սահմանադրական հանրաքվեից հետո Հայաստանը միայն 2018 թվականին է անցում կատարել խորհրդարանական կառավարման համակարգի:

Կոռուպցիայի դեպքերը, այն է՝ կոռուպցիոն գործողությունները, գործարքները կամ հանցագործությունները, սովորաբար բարդ են և մշուշված: Պաշտպանության բնագավառում դրանք լրացուցիչ քողարկված են ավելորդ կամ անհիմն գաղտնիության իրավակարգավորումների և պրակտիկայի շղարշով, ինչն ավելացնում է այս բնագավառի հակվածությունը կոռուպցիային: Մինչդեռ, պաշտպանության բնագավառում կոռուպցիայի հետևանքները չեն սահմանափակվում հանրային միջոցների անարդյունավետ և ոչ նպատակային օգտագործմամբ: Դրանք կարող են վտանգել զինծառայողների և քաղաքացիական բնակչության կյանքը, սպառնալ ազգային անվտանգությանը:

Կոռուպցիոն գործողությունները կարող են բացահայտվել և նույնականացվել օրինաչափ միտումների և նշանների՝ այսպես կոչված, «կարմիր դրոշակների» օգնությամբ, որոնք ահազանգում են խնդրահարույց վարքագծի կամ առնվազն կոռուպցիոն ռիսկերի մասին, այսինքն՝ կոռուպցիոն գործողությունների հնարավորության մասին: Կոռուպցիոն ռիսկերը կարող են պայմանավորված լինել ներքին և արտաքին գործոններով և կարող են առկա լինել այնպիսի միջավայրում, որտեղ բացակայում է գործընթացների ողջամիտ թափանցիկությունը, չկան հսկողական մեխանիզմներ և ջանքեր:

Սույն զեկույցը քննարկում է Հայաստանի պաշտպանության բնագավառի գնումների համակարգում բացահայտված «կարմիր դրոշակների»-ն վերաբերող օրենսդրական պահանջները, նկարագրում է կոռուպցիոն պրակտիկայի առկայության մասին հուշող դեպքերը և առաջարկում է տեղեկատվության շրջանակ, որը կարող է բարելավել թափանցիկությունը՝ այդպիսով նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: Բացի այդ, զեկույցն առաջարկում է ընդհանուր բնույթի՝ հսկողությանն ու վերահսկողությանը միտված միջոցառումներ, որոնք կարող են բացահայտել գնումների ողջ գործընթացում առկա խնդիրները:

⁵ Նույն տեղում

Չեկույցի նպատակն է խթանել Հայաստանի պաշտպանության բնագավառում գնումների գործընթացների բարեփոխումները՝ հուշելով պաշտոնյաներին, իրավապահ մարմիններին, պատգամավորներին և այլ վերահսկողական մարմիններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, թե որ դեպքերում է հարկավոր իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն, և օգնել տարբեր դերակատարներին՝ մասնակցելու առնչվող գործընթացներին:

Հետազոտությունը կատարվել է 2021 թվականի հունվար-մարտ ամիսներին: Այն անդրադարձել է Հայաստանի պաշտպանության բնագավառի 2016-2019 թվականների գնումներում կոռուպցիայի ենթադրյալ կամ ապացուցված դեպքերին: Հետազոտությունը հաշվի է առել ԹԻՉԿ-ի կողմից նախկինում կատարված պետական գնումների համակարգի ուսումնասիրության բացահայտումները, ինչպես նաև՝ ԹԻՊԱ-ի ԿՊՕՀ 2020 հետազոտության շրջանակում պաշտպանության գնումների ինստիտուցիոնալ հսկողության համակարգին տրված գնահատականները: Չեկույցը նաև հղում է կատարում տեղեկատվության բաց աղբյուրներին, ներառյալ՝ պետական հաստատությունների՝ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և իրավապահ մարմինների՝ Քննչական կոմիտեի⁶, Ազգային անվտանգության ծառայության⁷ (այսուհետ՝ ԱԱԾ) պաշտոնական կայքէջերին, դատարանների որոշումներին⁸, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների⁹ (այսուհետ՝ ԶՀԿ) զեկույցներին, մամուլի հրապարակումներին և այլն: Չնայած գաղտնագրված գնումների վերաբերյալ տեղեկատվության սակավությանը՝ զեկույցն, այնուամենայնիվ, անդրադարձել է պաշտպանության գնումներում առկա կոռուպցիայի մասին լրատվամիջոցների հրապարակումներին, քանի որ դրանք չեն հերքվել ՀՀ ՊՆ կամ պետական այլ հաստատությունների կողմից և կարող են հնարավոր խնդիրների ցուցիչ հանդիսանալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտությունը կատարվել է 2020 թվականին Արցախում ընթացած պատերազմից անմիջապես հետո, ինչպես նաև դրա հետ կապված քաղաքական անկայունությունը՝ հետազոտության շրջանակներում պաշտոնյաների կամ ընկերությունների հետ ճշգրտող հարցազրույցներ չեն անցկացվել: Այդուհանդերձ, զեկույցը գրախոսվել է բնագավառի երեք անկախ փորձագետների կողմից:

⁶ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148954>

⁷ ԱԱԾ, *Բացահայտվել է ՀՀ ՊՆ կարիքների համար գնումների գործընթացում առանձնապես խոշոր չափերով գումարի հափշտակման դեպք*, 21 օգոստոսի 2019թ., <https://www.sns.am/en/press-releases/2019/08/21/case-of-embezzlement-in-procurement-process-for-the-ra-ministry-of-defence-needs/177>. Գայանե Սարիբեկյան, *Չենքի առթուվածառքի կոռուպցիոն գործով ԱԱԾ-ն բերման է ենթարկել Դավիթ Գալստյանին*, 1 փետրվարի 2021թ., <https://www.azatutyun.am/a/31080269.html>. ԱԱԾ, *Հաղորդագրություն*, 1 փետրվարի 2021թ., <https://www.sns.am/hy/hayagorhagraproclunlnter/2021/02/01/hayagorhagraproclunlnter/545>

⁸ Դատարանի որոշում, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=1125899906904744. Դատարանի որոշում, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=15481123719147107

⁹ Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ, <http://policyobserver.am>

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը ՀՀ նախագահի կողմից հաստատվել է 2007 թվականին և այդ ժամանակից ի վեր չի վերանայվել¹⁰: Նույն տարում ՀՀ նախագահը հաստատել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը¹¹, որը ՀՀ կառավարության կողմից վերանայվել է 2020 թվականի հուլիսին¹²:

Հայաստանում պետական գնումները կարգավորվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի դեկտեմբերին ընդունված «Գնումների մասին» օրենքով¹³, ինչպես նաև մի շարք ենթաօրենսդրական ակտերով, ինչպիսիք են, օրինակ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշումը և «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածում թվարկված այլ դրույթները¹⁴:

«Գնումների մասին» օրենքը կարգավորում է բոլոր պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, նրանց ենթակա հիմնարկների և ընկերությունների, այդ թվում՝ ՀՀ ՊՆ-ի և նրա հիմնարկների ու ընկերությունների կողմից կատարվող գնումները (հոդված 2): «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պաշտպանության կազմակերպումը ենթադրում է գնումների արդյունավետ, թափանցիկ և մրցակցային գործընթաց խաղաղ ժամանակներում, իսկ ՀՀ ՊՆ-ն պատասխանատու է սպառազինության ձեռքբերման համար¹⁵:

Հայաստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման հիմնական եղանակներն են էլեկտրոնային աճուրդը, բաց և փակ մրցույթները, գնանշման հարցումը և մեկ անձից գնումը (հոդված 18): Եթե գնման առարկան ներառված չէ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների այն ցանկում, որոնք պետք է ձեռք բերվեն էլեկտրոնային աճուրդի միջոցով կամ պետական գաղտնիք պարունակող ապրանքների ցանկում, որոնք պետք է ձեռք բերվեն փակ պարբերական մրցույթի միջոցով, ապա, պաշտոնապես, գնումների նախընտրելի ձևը մրցույթն է (հոդված 18, մաս 5)¹⁶:

¹⁰ ՀՀ նախագահի 2007 դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» ՆՀ-308-Ն հրամանագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116>

¹¹ ՀՀ նախագահի 2007թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=31189>

¹² Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, <https://www.gov.am/am/National-Security-Strategy>

¹³ «Գնումների մասին» ՀՀ օրենքը (թվով՝ չորրորդ օրենքը, 2000թ., 2004թ. և 2010թ. օրենքերն ուժը կորցրած ճանաչելուց հետո), ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121796>

¹⁴ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=163113>

¹⁵ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1, կետ 15 և հոդված 10, մաս 1 մաս, կետ 10, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=147117>

¹⁶ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» N534-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138560>. ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=113367>:

Մրցույթը կարող է կատարվել երկու փուլով, ինչը ենթադրում է նախնական բանակցություններ նախաորակավորված մասնակիցների հետ, որի նպատակն է մշակել պատվիրատուի պահանջները բավարարող գնման առարկայի բնութագիր (հոդված 19):

«Գնումների մասին» օրենքի համաձայն՝ գաղտնի են համարվում այն ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները, որոնք ապահովում են ազգային և հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությունը: Դրանք ներառում են վերջիններիս գործունեության հետ կապված արարողակարգային, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման, հատուկ տեխնիկական և ծրագրային, կապի ծառայությունների, անվտանգության սարքերի և սարքավորումների սպասարկման, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման հետ կապված ծախսերը¹⁷:

Օրենքի տարբեր հոդվածներ կարգավորում են գաղտնի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման առանձին հանգամանքներ: Դրանք վերաբերում են.

- փակ մրցույթի կիրառմանը (հոդված 21, մաս 1),
- գնանշման հարցման կիրառման կոնկրետ դեպքերին (հոդված 22, մաս 1),
- հայտերի բացման նիստի արձանագրության հրապարակմանը (հոդված 33, մաս 8),
- պայմանագրի գնի հաշվարկին (հոդված 39, մաս 2),
- հայտերի գնահատման նիստի արձանագրությանը (հոդված 34, մաս 9),
- պահանջ ստանալու դեպքում պատվիրատուի կողմից գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթերի պատճենների տրամադրման սահմանափակումներին (հոդված 9, մաս 4),
- պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշման հրապարակմանը (հոդված 10, մաս 1),
- կնքված պայմանագրի մասին հայտարարության հրապարակմանը (հոդված 11, մաս 1):

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ (1996) հետևյալ ոլորտներում կատարվող գնումները կարող են դասվել գաղտնիքների շարքին.

- **Ռազմական բնագավառում** – ռազմական համակարգի պլանների վերաբերյալ տեղեկատվությունը, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերը և այլ հանգամանքներ (հոդված 9, մաս 1),
- **Արտաքին հարաբերություններում** – արտաքին տնտեսական (առևտրային, վարկային և արժույթային) գործունեության մասին տեղեկությունները, որոնց վաղաժամ տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության կենսական կարևոր շահերին և այլն (հոդված 9, մաս 2),

¹⁷ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 2. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=121904>:

- **Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառում** – արտաքին զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության գծով արդյունաբերական կարողությունների և այդ նպատակով ընկերությունների և հաստատությունների միջև փոխհամագործակցության կապերի, սպառազինություններ և ռազմական տեխնիկա արտադրողների կամ տեխնիկական և գիտական մշակումներ կատարողների վերաբերյալ տեղեկությունը և այլն (հոդված 9, մաս 3),
- **Հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ հետախուզական գործունեության բնագավառում** – հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական ուժերի, ռեսուրսների, աղբյուրների, մեթոդների, ծրագրերի և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման վերաբերյալ տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները, և այլն (հոդված 9, մաս 4)¹⁸:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը սահմանում է գաղտնիության երեք աստիճան՝ «գաղտնի», «հատուկ կարևորության» և «հույժ գաղտնի»: «Գաղտնի» աստիճան ունեցող տեղեկությունները կարող են այդպիսին հանդիսանալ մինչև 10 տարի, իսկ «հատուկ կարևորության» և «հույժ գաղտնի» տեղեկությունները՝ մինչև 30 տարի (հոդված 15): Չնայած օրենքը փորձում է տարբերակել տեղեկատվության վերը նշված երեք աստիճանների պաշտպանությունն՝ ըստ կարևորության, բնույթի և ծավալի, ինչպես նաև՝ դրանց բացահայտման դեպքում ազգային անվտանգությանը հասցվող հնարավոր վնասի այն չի մատնանշում ազգային անվտանգությանը հասցվելիք վնասի որոշման չափանիշները (հոդված 4):

2021 թվականի ՀՀ պետական բյուջեով «ռազմական պաշտպանության» համար ՀՀ Ազգային ժողովը հատկացրել է 306.3 մլրդ ՀՀ դրամ, որից մոտ 217.9 մլրդ դրամը՝ ռազմական կարիքների բավարարման և ռազմական նշանակության համակարգերի պահպանման համար և մոտ 87.2 մլրդ ՀՀ դրամը՝ ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման համար: ՀՀ ՊՆ «ռազմական պաշտպանության» ոչ գաղտնի գնումները կազմում են մոտավոր 29.4 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ 217.9 մլրդ դրամ բյուջեի մոտավորապես 87% գաղտնի է: ՀՀ ՊՆ շենքային պայմանների բարելավման ծախսերի ոչ գաղտնի մասը 4.7 մլրդ դրամ է, ինչը նշանակում է, որ 87.2 մլրդ դրամ հատկացումների 95% գաղտնի է¹⁹:

¹⁸ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=26193>

¹⁹ ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N2215-Ն որոշում, Հավելված 10, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149033>

Այն դեպքում, երբ ռազմական նշանակության կարևոր գնումների մեծ մասը դասակարգվում է «գաղտնի», ռազմական կարիքների համար կատարված բյուջետային հատկացումների ոչ գաղտնի մասը պարունակում է ավելորդ և ոչ անհրաժեշտ մանրամասներ: Այն կազմված է 2,190 տողից և ներառում է այնպիսի փոքր ծախսեր, ինչպես, օրինակ՝ տպագրական ծառայությունների ձեռքբերման համար կատարված 106 դրամ հատկացումը²⁰: Տվյալների այս աստիճանի մանրամասնումը ստվերում է ավելի մեծ ծախսերը, դժվարացնում է իրական վերահսկողությունը և, իրականում, թափանցիկության և հաշվետվողականության տեսակետից եական արժեք չի ներկայացնում:

Չենքերի և զինամթերքի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը հասանելի չէ, քանի որ դրանց գնման և պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը դասակարգված է որպես «գաղտնի»: Մինևույն ժամանակ՝ հաուբիցների, հրթիռների արձակման կայանների, հետևակի մարտական մեքենաների, զրահափոխարդիչների, տանկերի, ռազմական օդանավերի և ուղղաթիռների ու այլ ռազմական տեխնիկայի վերաբերյալ ամբողջական, ներառյալ՝ արտադրող երկրի վերաբերյալ, տեղեկատվություն կարելի է գտնել այնպիսի արտաքին աղբյուրներում, ինչպիսիք են, օրինակ՝ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI)²¹, Գլոբալ ֆայրփաուեր (Global Firepower)²², ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության²³ և այլ կառույցների հրապարակումները: Խնդրահարույց գնումների վերաբերյալ տեղեկատվությանը տեղական ռազմական վերլուծաբաններն անդրադառնում են նաև լրատվամիջոցներում: Օրինակ՝ Հայաստանի և Ադրբեյջանի կողմից ձեռք բերված հրթիռների վերաբերյալ տեղեկատվությունը 2021 թվականի փետրվարին հրապարակվեց EVN Report-ում²⁴: Ավելի վաղ՝ 2020 թվականի հունիսի 1-ին, «Կենտրոնական Ասիայի և Կովկասի վերլուծաբան» էլեկտրոնային պարբերականը հոդված էր հրապարակել Հայաստանին 40 մլն. դոլար արժողությամբ հնդկական SWATHI հակահրետանային ռադարների վաճառքի մասին: 2019 թվականի մարտին Նույն աղբյուրը տեղեկություններ էր հրապարակել Սմերչերի, TOS-1A ծանր կրականետիչ համակարգերի, Իզլա-S հակաօդային պաշտպանության և Կորնետ-E հակատանկային հրթիռային համակարգերի ձեռքբերման մասին²⁵: Չնայած այս տեղեկատվության մի մասը գալիս է երրորդ կողմի աղբյուրներից՝ մինչև այժմ ՀՀ կառավարությունը չի հերքել դրանք: Ավելին, մանրամասն տեղեկություններ են բացահայտվել ՀՀ քննչական կոմիտեի, ԱԱԾ և դատական դեպարտամենտի կողմից հրապարակված կոռուպցիոն դեպքերի քրեական հետաքննությունների ընթացքում:

²⁰ Գնումը ներառում է առանձին տողեր, որոնցով, օրինակ 400 ՀՀ դրամ (0.8 ԱՄՆ դոլար) է նախատեսվում անօդանավակա քիմիական նյութերի, երեք տարբեր տողեր 1500 ՀՀ դրամ (մոտ 3 ԱՄՆ դոլար) 3 մագնիսների, 500 ՀՀ դրամ (մոտ 1 ԱՄՆ դոլար) տարբեր քիմիական նյութերի, 13 տարբեր տողեր 2000 ՀՀ դրամ (մոտ 4 ԱՄՆ դոլար) 26 խոզանակ ձեռք բերելու համար և այլն:

²¹ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտ, *Առևտրի ռեգիստրներ*, https://armstrade.sipri.org/armstrade/page/trade_register.php. Hovhannes Nazaretyan, *Arms Supplies to Armenia and Azerbaijan*, EVN Report, 17 փետրվարի 2021թ., <https://evnreport.com/spotlight-karabakh/arms-supplies-to-armenia-and-azerbaijan>

²² Գլոբալ ֆայրփաուեր, *Հայաստանի և Ադրբեյջանի ռազմական հպրուստությունների համեմատություն*, <https://www.globalfirepower.com/countries-comparison-detail.asp?form=form&country1=armenia&country2=azerbaijan&Submit=COMPARE>

²³ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչություն, Երկրներ. Հայաստան, <https://www.cia.gov/the-world-factbook/countries/armenia>

²⁴ Hovhannes Nazaretyan, *Arms Supplies to Armenia and Azerbaijan*, EVN Report, 17 փետրվարի 2021թ., <https://www.evnreport.com/spotlight-karabakh/arms-supplies-to-armenia-and-azerbaijan>

²⁵ Fuad Shahbazov, *India Wins Defense Deal with Armenia*, The Central Asia – Caucasus Analyst: 1 հունիսի 2020թ., <http://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13620-india-wins-defense-deal-with-armenia.html>. Ilgar Gurbanov, *Military Procurements on Armenia's and Azerbaijan's Defense Agendas*, The Central Asia – Caucasus Analyst: 27 մարտի 2019թ., <https://cacianalyst.org/publications/analytical-articles/item/13564-military-procurements-on-armenias-and-azerbajians-defense-agendas.html>

Հայաստանն օգտագործում է էլեկտրոնային գնումների Armeps համակարգը²⁶: «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կառավարությունը հաստատում է էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը, էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, և փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող պաշտպանական նշանակության ոչ գաղտնի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկերը (հոդված 5, մաս 1, կետեր 2, 14, 15): 2017 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է 238 ապրանքների, 22 աշխատանքների և 56 ծառայությունների ցանկը, որոնք պետք է ձեռք բերվեն էլեկտրոնային գնումների եղանակով²⁷: Դրանց զգալի մասը կիրառվում է նաև պաշտպանության բնագավառում, ինչպես օրինակ՝ բենզինը, դիզելային վառելիքը, բոլոր տեսակի սննդային ապրանքները, թուղթը, գրասենյակային սարքավորումները և պարագաները, ծաղիկները, բույսերը և նման այլ պարագաները, մեքենաների և գրասենյակային սարքավորումների պահեստամասերը, դռները և պատուհանները, տրանսպորտային և հարակից ծառայությունները, ինտերնետային ծառայությունները և ծրագրային ապահովումը և այլն: Գաղտնի տեղեկություններ չպարունակող պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները հրապարակվում են «Գնումների պաշտոնական տեղեկագրում»²⁸:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները (հոդված 46, մաս 1): Վերջինս անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների և իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից (հոդված 47, մաս 2):

«Գնումների մասին» ՀՀ օրենքը բողոքարկման գործընթացի ամբողջությունը (ազնվությունը, օրինականությունը և արդարությունը) երաշխավորելու նպատակով մի շարք պահանջներ է սահմանում: Մասնավորապես՝ բողոքներ քննող անձը չի կարող քննել իր հետ առնչություն ունեցող կազմակերպության բողոքը (իր հիմնադրած կազմակերպության, կամ այն կազմակերպության, ուր ինքն ունի բաժնեմաս, կամ կապված է իր մերձավոր ազգականի կամ ինսամու, կամ այն կազմակերպության, որը հիմնադրվել է այդ անձի կողմից կամ որում նա բաժնեմաս ունի): Յուրաքանչյուր բողոքի քննման ժամանակ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ մեկտեղ հրապարակվում է տեղեկագրում: Շահերի բախման առկայության դեպքում բողոքներ քննող անձն ինքնաբացարկ է հայտնում տվյալ բողոքի քննումից (հոդված 49, մաս 2):

²⁶ Հայաստանի պետական գնումների էլեկտրոնային համակարգ, www.armeps.am: Համակարգը հաճախ չի գործում պատվիրատուներին ստիպելով գնման գործընթացը կազմակերպել թղթային եղանակով:

²⁷ ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 18-ի «էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» N534-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=138560>

²⁸ ՀՀ գնումների պաշտոնական տեղեկագիր, www.gnumner.am. ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգ, www.armeps.am/ppcm

ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ. ՀԻՄՆԱԿԱՆ «ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿՆԵՐԸ»

Հետազոտության և վերը ներկայացված աղբյուրների հիման վրա՝ սույն գեկույցը բացահայտել է ամենից հաճախ հանդիպող «կարմիր դրոշակները», որոնք պաշտպանության բնագավառի գնումների գործընթացում կոռուպցիայի կամ կոռուպցիոն ռիսկի առկայության նշան են.

- ▶ Կարմիր դրոշակ 1. Անորոշ կամ կողմնակալ տեխնիկական բնութագրեր կամ պահանջների անտեսում
- ▶ Կարմիր դրոշակ 2. Պայմանագրային գնի էական տարբերություն շուկայական արժեքի համեմատ
- ▶ Կարմիր դրոշակ 3. Ընտրված մասնակցի փոխկապակցվածություն ՊՆ-ի կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի հետ
- ▶ Կարմիր դրոշակ 4. Անարդյունավետ պլանավորում և ոչ պաշտոնական ձեռքբերումներ

Կարմիր դրոշակների ավելի մանրամասն նկարագրությունը, կոնկրետ նախագուշակական նշանները և համապատասխան կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև՝ թափանցիկության անհրաժեշտ միջոցները ներկայացված են ստորև:

▶ Կարմիր դրոշակ 1. Անորոշ կամ կողմնակալ տեխնիկական բնութագրեր կամ պահանջների անտեսում

Նկարագրություն

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրի պատրաստումը գնման գործընթացի առանցքային փուլ է, որի նպատակն է ստեղծել անհրաժեշտ հիմք, որպեսզի գնման առարկան բավարարի որոշակի կոնկրետ կարիքների և ունենա տևտեսապես արդարացված, ցածր գին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը գնման առարկայի բնութագրի հասկանալի և անաչառ ձևակերպման համար անհրաժեշտ մի շարք դրույթներ է նախատեսում: Գնման առարկայի նկարագրությունը պետք է ամբողջությամբ և հասկանալի կերպով ներկայացնի ձեռքբերվող ապրանքի, աշխատանքների կամ ծառայության բնութագրերը և դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով որևէ երկակի մեկնաբանություն: Գնման առարկայի բնութագիրը պետք է հնարավոր հայտատուների համար երաշխավորի մրցակցության հավասար պայմաններ, օբյեկտիվորեն հիմնավորված լինի և համապատասխանի այն կարիքին, որի համար կատարվում է գնումը, պետք է ներառի գնման առարկայի բնութագրի և տեխնիկական տվյալների ամբողջական և պատշաճ նկարագրությունը, աշխատանքների կատարման կամ ապրանքների կամ ծառայությունների մատուցման ժամանակացույցը և այլ ոչ գնային պայմաններ: Ելնելով գնման առարկայի առանձնահատկություններից՝ գնման առարկայի բնութագիրը պետք է հնարավորության սահմաններում ներառի «ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող

պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա» (հոդված 13):

Գնման առարկայի հատկանիշները կարող են նաև սահմանվել որպես կատարողականի կամ գործառույթային նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ մասնակիցներին և պատվիրատուին հնարավորություն տալով ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Գնման առարկայի հատկանիշները չպետք է պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի պահանջ կամ հղում, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումն օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը (հոդված 13):

Սովորաբար, ռազմական տեխնիկայի և ծրագրային ապահովման դեպքում ՀՀ ՊՆ-ն պետք է երաշխավորի, որ դրանք համատեղելի են զինված ուժերի տրամադրության տակ առկա մնացած տեխնիկայի և ծրագրային ապահովման միջոցների հետ, և որ դրանց ինտեգրումը առկա համակարգերի հետ կլրացնի երկրի պաշտպանողական կարողությունները:

Ավնհայտ է, որ գնման առարկայի բնութագրի անորոշության և իրական կարիքներին ձեռք բերվող առարկայի չհամապատասխանելու զինը պաշտպանության բնագավառում շատ ավելի բարձր է այլ բնագավառների հետ համեմատած, քանի որ այն կարող է խոչընդոտել բանակի կողմից երկրի պաշտպանությանը և վտանգել քաղաքացիների կյանքը:

Մատակարարի կողմից գնման առարկայի բնութագրի պահանջների բավարարման ստուգման կարևորագույն աշխատանքը արդյունքի ընդունման փուլում է, երբ հաստատվում է, որ մատուցվողը համապատասխանում է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պայմանագրում նշված բնութագրերին: Այս գործընթացը նկարագրված է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի XVII բաժնում:

«Կարմիր դրոշակներ»․ կոնկրետ նախագգուշական նշաններ

- Գնման առարկայի անհրաժեշտության վերլուծությունը լավ չի կատարվել:
- Գնումը լավ հիմնավորված չէ, այդ թվում՝ արդեն իսկ առկա համակարգերի և առարկաների համատեղելիությունը և փոխլրացումը գնվող առարկայի հետ:
- Տեխնիկական պահանջները համահունչ չեն ՀՀ զինված ուժերի կողմից արդեն իսկ օգտագործվող համակարգերի հետ համադրելիության և փոխգործարկելիության առումով:
- Տեխնիկական բնութագրերը հիմնված չեն հստակ պահանջների վրա:
- Տեխնիկական բնութագրերի սահմանումը շատ նեղ է և կողմնակալ, ինչը կարող է սահմանափակել մրցակցությունը:

- Տեխնիկական բնութագրերն անորոշ են, ինչը մեծացնում է երկիմաստությունը և դժվարացնում է ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ընդունումը պայմանագրի պահանջների կատարման ավարտին:
- Ընտրության և մրցույթի հաղթողի որոշման չափանիշները հստակ սահմանված կամ նախապես հայտնի չեն:

Դեպքեր

Անորոշ ձևակերպված կարիքները և բնութագրերը, պաշտպանական նշանակության ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վիճարկելի դեպքերը սովորական երևույթ են Հայաստանում: Մի քանի նման դեպք նկարագրված է ստորև:

2020 թվականի ամռանը ՀՀ ՊՆ-ն Հնդկաստանից ձեռք բերեց SWATHI հակահրետանային ռադարներ, ինչը մտահոգություններ առաջացրեց Հայաստանի զինված ուժերում առկա ռուսական արտադրության զինատեսակների հետ ինտեգրման դժվարությունների առումով²⁹: Գնումը եղել է գաղտնի, և գնման առարկայի բնութագիրը չի հրապարակվել, ինչը հնարավորություն չի տալիս վերլուծել՝ այն անորոշ էր ձևակերպված, թե՞ կողմնակալ կամ որո՞նք էին նախատեսված պահանջները: Այնուամենայնիվ, լրատվամիջոցների կողմից բարձրացված անհամադրելիության խնդիրը երբևէ չի հերքվել իշխանությունների կողմից: Հրապարակումներն առնվազն լուրջ մտահոգություն են առաջացնում կամ մշակված տեխնիկական բնութագրերի վատ որակի, կամ ձեռքբերված սխալ ապրանքներն ընդունելու որոշման կայացման առումով:

2019 թվականի մայիսին «ORSIS ARMS» ՍՊԸ-ն հաղթեց ՀՀ ՊՆ-ին ջերմատեսիլ սարքերի մատակարարման մրցույթում³⁰: Հետագայում ՀՀ ՊՆ-ն չեղարկեց մրցույթը: Մրցակիցներից մեկը՝ «Ունիկում ինժեներինգ» ՍՊԸ-ն, հայտարարեց, որ մրցույթի հաղթող «ORSIS ARMS» ՍՊԸ-ն հայտում առաջարկված 1,600 մետր աշխատանքային հեռավորության ռազմական սարքի փոխարեն առաջարկել է 600 մետր աշխատանքային հեռավորություն ունեցող որսորդական սարքավորում³¹: 2020 թվականի փետրվարին ORSIS-ի հիմնադիր «Պրոմտեխնոլոգիա» կորպորացիայի ներկայացուցիչ իրավաբան Ալեքսանդր Սիրունյանը հայտարարեց, որ ORSIS-ը հայտ ներկայացրած միակ ընկերությունն է, և որ որևէ այլ կողմ չի կարող մատակարարել տվյալ զինատեսակը: ORSIS-ը պահանջվող ապրանքի անմիջական արտադրողն է, և մեկ ուրիշը չի կարող մատակարարել 700 հատ պահանջվող սարքից: Հայտնի չէ, թե արդյո՞ք քրեական գործի հետաքննության շրջանակներում ՀՀ ՊՆ որևէ պաշտոնյա քրեական պատասխանատվության է ենթարկվել այս ակնհայտ ձախողման համար:

²⁹ Chitranjan Kumar, *India pips Russia, Poland to Secure \$40 mln Defence Deal with Armenia*, 1 մարտի 2020թ., <https://www.businesstoday.in/current/economy-politics/india-pips-russia-poland-to-secure--40-mln-defence-deal-to-armenia/story/397235.html>. Fuad Shahbazov, *India Wins Defense Deal with Armenia*, 1 հունիսի 2020թ., <https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13620-india-wins-defense-deal-with-armenia.html>:

³⁰ Նարեկ Կիրակոսյան, «Եղել է հանցավոր արարք». Ո՞վ և ի՞նչ նպատակով է փորձել ռազմականի փոխարեն որսորդական ռազմամթերք մատակարարել ՀՀ ՊՆ-ին. ORSIS-ի գործով նոր սևերասաններ, Ֆակտոր, 4 նոյեմբերի 2019թ., <https://factor.am/196539.html>:

³¹ Նույն տեղում. Սարգիս Հարությունյան, ՊՆ. Կասկածներ կան, որ ռուսաստանյան ընկերությունը նպատակ է ունեցել մատակարարել որսորդական, ոչ ռազմական նշանակության սարքեր, 12 փետրվարի 2020թ., <https://www.azatutyun.am/a/30430770.html>. Համաձայն Իրավաբանական անձանց ռեգիստրի՝ <https://www.e-register.am/am/companies/1283081>-ի, «Ունիկում ինժեներինգ» ՍՊԸ-ի հիմնադիր Վարդան Բալայանը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է:

2018 թվականին ՀՀ ՊՆ-ն «Moston Engineering» ընկերության հետ 1983-1986 թվականների արտադրության հրանոթի արկերի մատակարարման պայմանագիր է կնքել: ԱՎԾ-ի հրապարակած տեղեկության համաձայն՝ ընկերությունն իրականում մատակարարել է 1977 թվականի արտադրության արկեր³²: Մատակարարված արկերը ցածրորակ էին, չեն ապահովել խոցման ցանկալի հեռավորություն և համատեղելի չէին ՀՀ ՊՆ ունեցած հրետանային զինամթերքի հետ, ինչով պայմանավորված՝ չէին կարող օգտագործվել ռազմական առաջադրանքներ կատարելու նպատակով: 2021 թվականի փետրվարին ԱՎԾ-ն հայտարարեց «Moston Engineering»-ի նախագահ, ՀՀ պաշտպանության նախարարի նախկին խորհրդական Դավիթ Գալստյանի կալանավորման մասին³³: ԱՎԾ-ն չի մանրամասնել, թե արդյո՞ք անորոշ տեխնիկական բնութագիր պատրաստելու կամ պայմանագրի կատարման ավարտական փուլում ձեռք բերված արկերն ընդունելու համար մեղադրանք առաջադրվել է ՀՀ ՊՆ որևէ պաշտոնյայի: Հետագայում ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին մեղադրանք առաջադրվեց խոշոր չափերով յուրացման համար:

Ավելի վաղ՝ 2016 թվականին, Քննչական կոմիտեն հայտարարել էր, որ ՀՀ զինված ուժերի սպառազինության վարչության ավտոձառայության պետ, գնդապետ Դավիթ Աբրահամյանը չարաշահել է իր պաշտոնական դիրքը և կազմակերպել կնքված պայմանագրին կից տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող գործիքների և սարքավորումների ընդունում: ՀՀ քննչական կոմիտեի մամլո հաղորդագրությունը չի հիշատակում տեխնիկական բնութագիրը, իսկ զինամթերքի մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնագրված է, ինչի պատճառով այն հնարավոր չէ ստուգել: Այդուհանդերձ, հանրայնորեն հասանելի սեղմ տեղեկատվությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ձեռքբերված ապրանքները կարող էին չհամապատասխանել ներկայացված պահանջներին վերջիններիս տեխնիկական բնութագրերի ոչ պարզ կամ կողմնակալ ձևակերպված լինելու պատճառով, ինչի արդյունքում դրանք կարող էին տարբեր կերպ մեկնաբանվել և/կամ անտեսվել գնահատող հանձնաժողովի կողմից՝ հայտերի գնահատման կամ ՀՀ ՊՆ գնման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ ապրանքների հանձն-ընդունման փուլում: Դ. Աբրահամյանն ընդունել է իր մեղքը և դատապարտվել 4 տարվա ազատազրկման³⁴:

³² Նարեկ Կիրակոսյան, *Ու՞մ օրոք է «Պատրոն Դավոն» կեղծիքներով ՊՆ-ին 1.83 մլն դոլարի վեճք վաճառել. ԱՎԾ-ի աղմկահարույց տեսակյութի ինտրիգը*, Տեսակյութ. Ֆակտոր, 1 փետրվարի 2021թ., <https://factor.am/334040.html>

³³ ՀՀ ԱՎԾ, *Հաղորդագրություն*, 1 փետրվարի 2021թ., <https://www.sns.am/hy/hաղորդագրություններ/2021/02/01/հաղորդագրություն-տեսակյութ/545>. ArmeniaSputnik, «Պատրոն Դավոն» պատասխանել է ԱՎԾ-ին, 2 փետրվարի 2021թ., <https://armeniasputnik.am/armenia/20210202/26302951/patron-davon-patasxanel-e-aac-in.html>. Սկրոիչ Կարապետյան, *Ո՞վ է Հայաստանում «Կալաշնիկով» արտադրողը. Լիբիա մատակարարած վենթից մինչև վճարումներ Պորտոնկոյի ընկերությանը*, Սիվիլնեթ, 19 փետրվարի 2019թ., <https://civilnet.am/news/189241>. Գայանե Սարիբեկյան, *Չենքի առքուվաճառքի կոռուպցիոն գործով ԱՎԾ-ն բերման է ենթարկել Դավիթ Գալստյանին*, Ազատություն ռադիոկայան, 1 փետրվարի 2021թ., <https://www.azatutyun.am/a/31080269.html>

³⁴ Դատարանի որոշում, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=15481123719147107. ՀՀ քննչական կոմիտե, *Դ. Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել՝ իշխանությունը չարաշահելու համար, ինչն առաջացրել է կյուբական ծանր հետևանքներ. նրա պաշտոնավարումը ժամանակավորապես դադարեցվել է*, 18 մայիսի 2016թ., <https://www.investigative.am/news/view/davit-abrahamyan-mexadranq.html>

Ո՞ր տեղեկատվությունը կարող է օգնել՝ կանխելու կոռուպցիոն այս ռիսկը

1. Որևէ գույքի, աշխատանքի կամ ծառայության անհրաժեշտությունը, դրանց համատեղելիությունը և փոխլրացվելիությունը արդեն իսկ առկա այլ համակարգերի և սարքերի հետ պետք է վերլուծվի, հիմնավորվի և հաստատվի պատասխանատու պաշտոնյայի կողմից, ինչպես նաև ներառի հաստատման հիմքերը:
2. Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերը պետք է մշակվեն տվյալ զինատեսակը, զինամթերքը, ծառայությունը կամ աշխատանքն օգտագործող ստորաբաժանման հետ, որպեսզի երաշխավորվի համատեղելիությունը և փոխլրացվելիությունը:
3. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերը պետք է լինեն հստակ ձևակերպված և ստանդարտացված, որպեսզի զերծ լինեն սխալ մեկնաբանություններից ու շահարկումներից և չտան առիթ կողմնակալ որոշումների համար:
4. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման բնութագրերը պետք է հրապարակվեն, եթե դրանք չեն խախտում գաղտնիության պահանջները, իսկ բնութագրերի գաղտնագրման պարագայում պետք է լինի հստակ հիմնավորում:
5. «Գնումների մասին» ՀՀ օրենքը պետք է թույլ տա, իսկ կառավարությունը պետք է մշակի և հրապարակի ազգային անվտանգության համար անհրաժեշտ իրերի խմբերը, որոնք պետք է ձեռք բերվեն բացառապես պետության կողմից և բացառապես՝ արտադրողից:



Կարմիր դրոշակ 2. Պայմանագրային գնի էական տարբերություն շուկայական արժեքի համեմատ

Նկարագրություն

Որոշ դեպքերում պայմանագրերում նշված գնման գինը կարող է էականորեն տարբերվել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շուկայական գնից: Հնարավոր է, որ ժամանակի ընթացքում պայմանագրի գինն ավելացվել է, որպեսզի ձեռք բերվի լրացուցիչ իր, կամ փոխհատուցվել են չնախատեսված ինչ-ինչ ծախսեր: Գնի էական աճը կարող է հանրային միջոցների անարդյունավետ օգտագործման, յուրացման, «ատկատի» կամ միջևորդներին վճարման նշան լինել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը մի քանի կարգավորում է նախատեսում, որպեսզի թույլ չտա պայմանագրի գնի շեղում շուկայական արժեքից: Օրենքի համաձայն՝ գնում կատարողը պետք է նախապատվությունը տա բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրածին կամ այն մասնակցին, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է (հոդված 34, մաս 2, կետեր 1 և 2):

Օրենքի համաձայն՝ գնում կատարողը կարող է որպես լրացուցիչ գնում միևնույն մեկ անձից գնել ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ, եթե դրանց ձեռքբերումն անհրաժեշտ է դարձել՝ «օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով սկզբնական պայմանագրի կատարման համար»: Լրացուցիչ գնումը չպետք է գերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Լրացուցիչ միավորի գնումը նույն աղբյուրից կարող է կատարվել միայն մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող պայմանագրով նախատեսված գնից բարձր լինել (հոդված 23, մաս 1, կետ 3):

Օրենսդրությունն արգելում է այնպիսի փոփոխություններ կատարել պայմանագրում, որոնք նախատեսում են մատակարարվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալի կամ դրանց մեկ միավորի գնի կամ պայմանագրի գնի փոփոխում (ՀՀ կառավարության 2017 թվականի N526-Ն որոշման կետ 56), թեև, միաժամանակ, այն սահմանում է բացառություններ մեկ աղբյուրից պետական գաղտնիք պարունակող գնումների համար, որտեղ առկա է հատուկ կամ բացառիկ իրավունք («Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 23, մաս 1, կետ 4, ՀՀ կառավարության 2017 թվականի N526-Ն որոշման 56.2 և 23.4.5 կետեր):

2020թ. ԹԻՅԿ կողմից իրականացված «Գործարարների շրջանում տնտեսական մրցակցության ընկալման սոցիոլոգիական հետազոտություն»-ում նշվում է, որ գնումների պրակտիկայում հաղթողի պայմանագրային գինը կարող է շուկայականից ցածր լինել, ինչը մրցակցային առավելություն է տալիս այդ մատակարարներին: Սակայն, այսպիսի պրակտիկան կարող է նպատակային դեմփինգի նշան լինել, որով փորձ է արվում ամեն գնով հաղթել գնման մրցույթում, շուկայում ստանալ գերիշխող դիրք կամ փաստացի խաբել, որը կարող է հանգեցնել մատակարարվող գնման առարկայի ոչ պատշաճ որակի³⁵: Թեև նշված հետազոտությունը չի առանձնացրել ոլորտները, ընդգծված խնդիրները կարող են վերաբերել լինել նաև պաշտպանության հետ կապված գնումների դեպքում: Ավելորդ չէ նշել, որ պաշտպանության բնագավառում անորակ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մատակարարումը կարող է աղետալի հետևանքներ ունենալ ազգային անվտանգության և մարդկային կյանքերի համար:

Նույն տրամաբանությունը կարող է գործել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցածր գնով ձեռքբերման կամ միջազգային գործընկերային համաձայնագրերի շրջանակներում արտասահմանյան մատակարարներից անվճար ստանալու պարագայում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 5-ի համաձայն՝ միջազգային համաձայնագրերը գերակայում են ազգային օրենսդրության նկատմամբ, ուստի այդպիսի ձեռքբերումները կարող են կատարվել՝ առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին հետևելու: Նման պրակտիկան ռիսկային է ազգային անվտանգությունը օտարերկրյա գործընկերներից անհիմն կախվածության մեջ զգելու և խնդրահարույց ակնկալիքներ ձևավորելու առումով:

³⁵ ԹԻՅԿ և Էյ-ԷՄ Փարթներս, *Գործարարների շրջանում տնտեսական մրցակցության ընկալման սոցիոլոգիական հետազոտություն*, Երևան, 2020թ., <https://transparency.am/files/publications/1582712146-0-567954.pdf?v=4>, 57-58 էջեր

«Կարմիր դրոշակներ». կոնկրետ նախագգուշական նշաններ

- Պարզ չէ, թե արդյո՞ք գնում իրականացնող պետական մարմինը ջանք գործադրել է գնահատելու իր կողմից ստորագրվող պայմանագրի արժեքը:
- Կառավարությունը գնում է կատարում մեկ անձից, հատկապես այն դեպքում, երբ մրցութային եղանակով գնումն ավելի տեղին կլիներ, ինչը արդյունքում հանգեցնում է պայմանագրի արժեքի՝ շուկայական գնից բարձր լինելուն:
- Գնման պայմանագիրը ներառում է գներ, որոնք եականորեն շեղված են շուկայականից՝ բարձր են կամ ցածր:
- Պայմանագրեր են կնքվում են ոչ մասնագիտացած կամ որակավորում չունեցող՝ միջնորդ հանդիսացող ընկերության հետ:
- Ձեռքբերումը կատարվում է արտոնյալ և/կամ անորոշ համաձայնությունների հիմքի վրա:
- Մատակարարը չունի պահանջվող որակավորումները:

Դեպքեր

Գործնականում բացահայտվել են մի շարք դեպքեր, երբ ՀՀ ՊՆ կողմից կնքված պայմանագրի արժեքը զգալիորեն բարձր է եղել ձեռքբերված ապրանքների շուկայական արժեքից, ինչը հնարավոր կոռուպցիոն գործարքների նշան է:

2021 թվականի հունվար-փետրվար ամիսներին վերը նշված «ORSIS ARMS» ՍՊԸ ներկայացուցիչ Ալեքսանդր Սիրունյանը պնդում էր, որ ՀՀ ՊՆ-ն «Կորնետ» հակատանկային հրթիռային համակարգեր է ձեռք բերել 300 հազար ԱՄՆ դոլար արժեքով, մինչդեռ դրանց շուկայական արժեքը 85-90 հազար է³⁶: Նա նաև ընդգծել էր, որ 250 ԱՄՆ դոլարանոց զրահաբաճկոնները գնվել են 1,300 ԱՄՆ դոլարով³⁷:

2019 թվականի սեպտեմբերին ՀՀ Ազգային ժողովի ընդդիմադիր «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից պատգամավոր, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հարցերի հանձնաժողովի նախագահ Մանե Թանդիլյանը հարցականի տակ էր դրել ՀՀ ՊՆ կողմից «Հիդրո գրուպ» ՍՊԸ-ից մեկ տոննա ցեմենտը մոտավորապես 100 ԱՄՆ դոլարով (48,000 հազար ՀՀ դրամ) ձեռք բերելու փաստը, այն դեպքում, երբ 2018 թվականի դեկտեմբերի 20-ին գործարանը հայտարարել էր ցեմենտի մեկ տոննայի գինը մինչև 40,000 ՀՀ դրամ նվազեցնելու մասին: ՀՀ կառավարության կողմից ընդհանուր գերաժախսը գնահատվել էր մոտավորապես 5,600 ԱՄՆ դոլար (մոտ 2.7 միլիոն ՀՀ դրամ): Թանդիլյանը նաև կասկածի տակ էր դրել այն, որ ՀՀ ՊՆ-ն մոտավորապես 330 հազար ԱՄՆ դոլարի (մոտ 150 միլիոն ՀՀ դրամ) ցեմենտը գնել էր 2 աշխատակից ունեցող ընկերությունից³⁸: Այսինքն,

³⁶ 1in.am, ՊՆ-ն 3.5 մլն դոլար վարել է տվել Պատրոն Դավոյի ընկերության, 1 փետրվարի 2021թ., <https://www.1in.am/2895709.html>

³⁷ Հարցազրույց Ալեքսանդր Սիրունյանի հետ, *Չգիտեմ՝ Դավիթ Գալստյանը որ գործով է որպես մեղադրյալ, բայց քննությունը պետք է պարզի, թե ինչու են 250 դոլարանոց բրոնտիլետները 1300 դոլարով գնել*, ArmDaily, 19 հունվարի 2021թ., <https://armdaily.am/?p=123588&l=am>

³⁸ Armenia Sputnik, ՊՆ-ն ակնհայտ թանկ գնով ցեմենտ է գնել: Թանդիլյանը կոռուպցիոն ռիսկեր է տեսնում, 11 սեպտեմբերի 2019թ., <https://armeniasputnik.am/armenia/20190911/20362923/pn-n-aknhayt-tank-gnov-cement-e-gnel-tandilyany-korupcion-risker-e-tesnum.html>. Առավուտ, *Գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու դեպքում, հնարավոր էր ինչպես առնվազն 2,7 մլն դրամ. Մանե Թանդիլյանը՝ ցեմենտի ձեռքբերման մասին ՊՆ-ի պարպաբանման վերաբերյալ*, 13 սեպտեմբերի 2019թ., <https://www.aravot.am/2019/09/13/1065583>. Հետք, *Մանե Թանդիլյանն անդրադարձավ ՊՆ գնումներին. նախարարությունը 2 աշխատակից ունեցող շինարարական ընկերության հետ պայմանագրեր է կնքում*, 11 սեպտեմբերի 2019թ., <https://hetq.am/hy/article/107233>. Panorama.am, *Ցեմենտ-միլիոններ-Թանդիլյան-ՊՆ քննարկման նոր արձագանքները*, 13 սեպտեմբերի 2019թ., <https://www.panorama.am/am/news/2019/09/13/Ցեմենտ-Թանդիլյան->

այլ զբաղվում է բժշկական սարքավորումների և հարակից պարագաների առևտրով: Ավելին, պարզվել էր, որ ընկերության սեփականատերերից մեկը սերտ հարաբերություններ ունի ՀՀ պաշտպանության նախարարի հետ, ինչը վկայում է շահերի հնարավոր բախման մասին⁴⁴:

2016 թվականի մայիս-հունիս ամիսներին՝ ապրիլյան 4-օրյա պատերազմից օրեր անց, ՀՀ քննչական կոմիտեն տեղեկություն հրապարակեց գեներալ-մայոր Մելսիկ Չիլինգարյանի, գնդապետներ Արմեն Մարգարյանի և Միեր Պապյանի կողմից պաշտոնական դիրքը չարաշահելու հանգամանքով պայմանավորված մեղադրանք առաջադրելու մասին: Համաձայն տեղեկատվության՝ նրանց գործողությունները «ծանր հետևանքներ» էին առաջացրել: Չարաշահումը ենթադրաբար տեղի էր ունեցել զինամթերքի գնման ժամանակ, որտեղ ձեռքբերված ապրանքների պայմանագրային գինը շուկայականից բարձր է եղել, իսկ մատակարարված ապրանքները չեն համապատասխանել ՀՀ զինված ուժերի կարիքները բավարարելու համար անհրաժեշտ ապրանքներին ներկայացվող պահանջներին⁴⁵: Բոլոր երեք անձանց դեպքում որպես խափանման միջոց ընտրվել էր կալանավորումը: Որոշ ժամանակ անց գեներալ-մայոր Չիլինգարյանն առողջական խնդիրների պատճառով տեղափոխվել էր Երևանի կայազորային հիվանդանոց, իսկ մոտավորապես մեկ ամիս հետո առողջական լուրջ խնդիրների պատճառով կալանավորումը՝ որպես խափանման միջոց, փոխվել էր⁴⁶: Այս գործի ընթացքի վերաբերյալ հետագայում տեղեկատվություն չի եղել:

Ո՞ր տեղեկատվությունը կարող է օգնել՝ կանխելու կոռուպցիոն այս ռիսկը

1. Մրցույթի հայտարարություն տալիս կամ մրցույթին մասնակցության հրավեր ուղարկելիս ՊՆ-ն պետք է ունենա իր կողմից կատարվելիք գնման՝ գրասենյակային խորը ուսումնասիրությունների վրա հիմնված «գնահատված արժեքը» և հայտատուների կողմից անհիմն գնային առաջարկներ ստանալու դեպքում պետք է բացահայտի սեփական հաշվարկները:
2. ՊՆ-ն պետք է վերանայի միջազգային գործընկերության համաձայնագրերի շրջանակներում «էժան» ձեռքբերումների իր մոտեցումը և ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ժամանակ կիրառի ավելի խիստ կանոններ, այդ թվում՝ գնման առարկայի բնութագրերը մշակելիս, պայմանագրի իրականացման պայմանները սահմանելիս, որակի վերահսկողության և այլ գործառնություններ իրականացնելիս:
3. ՀՀ կառավարությունը և ՊՆ-ն պետք է պարբերաբար կատարեն Հայաստանի գնումների ընթացակարգերի վերլուծություն՝ Հայաստանի պաշտպանության և ազգային անվտանգության հետ կապված հարցերում բացառելու որևէ այլ պետությունից կախվածությունը կամ վերջինիս գերիշխանությունը:

⁴⁴ Սկրոտիչ Կարապետյան, *Բանակում սննդի մատարարման նոր կարգ. երկու ընկերություններից մեկը ոլորտից չէ*, Civilnet, 21 փետրվարի 2019թ., <https://civilnet.am/news/189311>. «ՄԵԴԻՏԵԶ» ՄՊԸ մասին տեղեկատվություն, <https://www.spyur.am/am/companies/meditech/47868> և <https://meditech.am/>

⁴⁵ ՀՀ քննչական կոմիտե, *Գեներալ-մայոր Մելսիկ Չիլինգարյանին, գնդապետներ Արմեն Մարգարյանին և Միեր Պապյանին մեղադրանքներ են առաջադրվել պաշտոնական դիրքը չարաշահելու համար*, 2 հունիսի 2016թ., <http://investigative.am/en/news/view/zinvorakanner-mexadrang.html>. «Ազատություն» ռադիոկայան, *Ձերբակալվել են գեներալ Մելսիկ Չիլինգարյանը և երկու գնդապետ*, 31 մայիսի 2016թ., <https://www.youtube.com/watch?v=bO9qR5WRBvU>

⁴⁶ Հասմիկ Գրիգորյան, *Փոխվել է գեներալ Մելսիկ Չիլինգարյանի խափանման միջոցը: «Ազատություն» ռադիոկայան*, 29 հունիսի 2019թ., <https://www.azatutyun.am/a/27827958.html>

Գնում, թե՛ «բարեգործություն»

Որպես Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ և Ռուսաստանի Դաշնության ռազմավարական դաշնակից՝ Հայաստանը Ռուսաստանից նոր զինատեսակները ձեռք է բերում վերջինիս ներքին գներով՝ շուկայականից ցածր արժեքով: 2015-2017 թվականներին մի շարք զինատեսակներ ձեռք բերելու համար Ռուսաստանը Հայաստանին 200 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ վարկ է տրամադրել: Վարկի մարումը սկսվել է 2018 թվականին:

Այդ գնումները չեն անցնում սովորական գնման գործընթացով և անհրաժեշտ չափով չեն վերահսկվում: Այնուամենայնիվ, այս մոտեցման հետ կապված ռիսկեր կան և 2020 թվականի աշնան 44-օրյա պատերազմը բացահայտեց դրանցից մի քանիսը:

Առաջինը՝ պարզվեց, որ Ռուսաստանի կողմից Հայաստանին ավելի վաղ վաճառված SU-30SM կործանիչները մատակարարվել են առանց հրթիռների: Գործարքի հետ կապված տարբեր ենթադրություններ կան, այդ թվում՝ այն, որ ժամանակացույցի համաձայն՝ ծրագրված էր հրթիռներն առաքել ավելի ուշ, և որ, ըստ էության, հրթիռներ վաճառելու մտադրություն չի եղել: Այս ծախսողման պաշտոնական բացատրություն չի եղել:

Երկրորդ դեպքը վերաբերում է կարճ հեռավորության «Իսկանդեր» բալիստիկ հրթիռային համակարգերին, 2016 թվականին Ռուսաստանի կողմից տրամադրված արտոնյալ վարկի շրջանակներում Հայաստանի կողմից նոր զինատեսակի գլխավոր ձեռքբերմանը: Արցախի դեմ Ադրբեյջանի 44-օրյա ագրեսիայի ժամանակ դրա օգտագործումը և արդյունավետությունը Հայաստանում, Ադրբեյջանում և Ռուսաստանում քննարկման և հակասության թեմա էր դարձել: Առաջին՝ տպավորություն էր, որ այս հրթիռային համակարգը Հայաստանին չէր տրամադրվել Ադրբեյջանի և Թուրքիայի զինված ուժերի կողմից հարձակման ենթարկված Արցախի հայ բնակչությանը պաշտպանելու համար: Երկրորդ՝ բացահայտվել էր, որ «Իսկանդեր»-ը Հայաստանի կողմից չէր կարող կառավարվել առանց Ռուսաստանի միջամտության, ինչը հստակ կերպով նշվել էր 2018 թվականի դեկտեմբերի սկզբին հայ-ռուսական համագործակցության հարթակի Լազարևյան ակումբի նստաշրջանում:

Ավստրալիայից է, որ «անվճար ճաշ» չի լինում, և Հայաստանի կողմից կատարվող «էժան», առանց գնումների ընթացակարգերին հետևելու կատարված գնումների դիմաց երկիրը վճարում է՝ ավելի շատ կախվածության մեջ ընկնելով Ռուսաստանից: Հաշվի առնելով նավթով հարուստ հարևան Ադրբեյջանի ռազմական կարողությունների ինտենսիվ ավելացումը, այդ թվում՝ Ռուսաստանից ձեռք բերվող զինատեսակների հաշվին, ինչպես նաև վերջինիս սեփական շահերը և քաղաքականությունը տարածաշրջանում՝ Հայաստանի պետականությունը և հայերին դրել են խիստ խոցելի վիճակում:



Կարմիր դրոշակ 3. Ընտրված մասնակցի փոխկապակցվածություն ՊՆ-ի կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի հետ

Նկարագրություն

Շահերի բախում առկա է, եթե որոշում կայացնելու կամ գործողություն կատարելու լիազորություններով օժտված պաշտոնյան հայտնվում է մի իրավիճակում, որում պաշտոնական գործառնությունն ու մասնավոր շահերն անհամատեղելի են: Կարող են լինել դեպքեր, երբ ՊՆ-ն պայմանագրեր է կնքում այնպիսի ընկերությունների հետ, որոնց շահառուների հարազատներն աշխատում են նախարարությունում, մասնավորապես, երբ նրանք ներգրավված են գնումների գործառնությունում կամ ընկերությունների բաժնետերերի ցանկում, գործարար հարաբերություններում կամ որոշումներ կայացնող պաշտոններում ներգրավված են քաղաքական ազդեցություն ունեցող անձինք:

Չնայած շահերի բախման առերևույթ լինելը դեռևս միանշանակ կոռուպցիայի դրսևորում չէ՝ այն զգալիորեն մեծացնում է ռիսկը, որ պաշտոնյան իրեն վերապահված իշխանությունը կարող է օգտագործել այնպիսի եղանակներով, որոնք կխաթարեն գործընթացի օրինավորությունը կամ վնաս կհասցնեն պետության շահին: Ինչքան ամուր են անձնական կապերը կամ հզոր է քաղաքական ազդեցություն ունեցող անձը, այնքան նա ավելի ունակ է նվազեցնել հսկողության ու հավասարակշռման ձևավորված համակարգերը:

Նաև կարող են լինել անուղղակի խողովակներ, որոնց միջոցով ՊՆ պաշտոնյան կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձը կարող են շահել մատակարարի հետ ունեցած կապերի արդյունքում, օրինակ՝ երրորդ կողմի հետ բիզնես հարաբերությունների պարագայում, ինչպիսիք կարող են լինել խորհրդատվության կամ ենթակապալային պայմանագրերը: Բացի այդ, կարող է լինել միջանկյալ շահառու կամ օտար պետությունում գտնվող վերջնական իրական շահառու:

Ընդհանուր առմամբ, ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներին արգելվում է ներգրավվել ձեռնարկատիրական գործունեության մեջ ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 95-ը սահմանում է արգելք պատգամավորների, հոդված 124-ը՝ նախագահի, հոդված 164-ը՝ դատավորների համար), «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքով (հոդված 31) և հանրային ծառայողների տարբեր խմբերի (օրինակ՝ քաղաքացիական, համայնքային, հարկային և այլ ծառայողների) վերաբերող այլ հարակից օրենքներով: Այդուհանդերձ, իրական կյանքում շատ պաշտոնյաներ ներգրավված են բիզնեսում՝ հաճախ թաքնվելով ընտանիքի անդամների կամ հարազատների կամ ընկերների անունների հետևում:

Վերջին տարիներին «Գնումների մասին» ՀՀ օրենքը բարելավվել է և համապատասխանեցվել միջազգային չափանիշներին: Ի լրումն որոշ հանցագործությունների համար դատապարտված անձանց՝ գնումների գործընթացին մասնակցելու սահմանափակումների (հոդված 6, մաս 1, կետ 3) և գնման գործընթացի շրջանակներում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնությունների բացակայության մասին հայտարարության պահանջի (հոդված 28, մաս 2, կետ 2ա)՝ օրենքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք նպատակ ունեն կանխել շահերի բախման իրավիճակում գործողությունների կատարումը և որոշումների կայացումը: Մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովի անդամին կամ քարտուղարին արգելվում է մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե

հանձնաժողովի գործունեության ընթացքում պարզվում է, որ դիմորդ ընկերություններից որևէ մեկը փոխկապակցված է նրա հետ, օրինակ՝ հիմնվել է տվյալ պաշտոնյայի կողմից, կամ ընկերություններից մեկում պաշտոնյան ունի բաժնեմաս, կամ ընկերությունը հիմնադրվել է պաշտոնյայի հետ ազգակցական կամ խնամիական կապ ունեցող անձի կողմից, կամ այդպիսի կապ ունեցող անձը բաժնեմաս ունի տվյալ ընկերությունում (հոդված 33, մաս 6):

Հանձնաժողովի անդամները և քարտուղարը պետք է շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ստորագրեն, որը պետք է հրապարակվի հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող հրապարակվելիք գնումների պաշտոնական տեղեկագրում: Երբ գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը հայտնվում է շահերի բախման իրավիճակում, նա հայտերի բացման նիստից հետո անմիջապես պետք է ինքնաբացարկ հայտնի (հոդված 33, մաս 7): Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում (հոդված 33, մաս 8):

Ի լրումն, հայտատուն պետք է բացահայտի ընկերության իրական շահառուների (այսինքն՝ ֆիզիկական անձ կամ անձինք, ովքեր ուղղակի կամ անուղղակի տնօրինում են գնումներին մասնակցող ընկերության կանոնադրական կապիտալի քվեարկության իրավունք տվող բաժնեմասերի 10 տոկոսը, ներառյալ՝ անանուն բաժնեմասը (bearer shares), կամ անձը/անձինք, ովքեր իրավասու են նշանակել կամ պաշտոնից ազատել գործադիր մարմնի անդամին, կամ ովքեր ստանում են տվյալ ընկերության ձևավորված շահույթի 15 տոկոսից ավելին) վերաբերյալ տեղեկատվությունը կամ նրանց բացակայության դեպքում՝ տվյալներ տրամադրի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների մասին: Մրցույթի հաղթողի ընտրությունից հետո նշված տեղեկությունը պետք է հրապարակվի գնումների պաշտոնական տեղեկագրում՝ ներառելով պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշման ծանուցումը (հոդված 28, մաս 2, կետ 2բ): Չնայած օրենքը հստակ չի նշում, սակայն գաղտնագրված գնումների դեպքում այս տեղեկատվությունը կարող է չհրապարակվել:

Ընկերության իրական շահառուների թափանցիկության վերաբերյալ հարցն ավելի ընդգրկուն կերպով կարգավորվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով և կիրարկվում է ընկերությունների էլեկտրոնային ռեգիստրի միջոցով⁴⁷: Հրապարակվող տեղեկության ճշտությունը ստուգելու նպատակով այս օրենքը սահմանել է պահանջ, որպեսզի վերաբերելի դեպքերում ընկերությունների իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը բացահայտվի ստորագրված հայտարարագրերի միջոցով (հոդված 26, մաս 22):

Ներկայում ընկերությունների ռեգիստրն անվճար հասանելի է միայն լրատվամիջոցներին: Այլ հետաքրքրվողների համար յուրաքանչյուր ընկերության դեպքում տեղեկատվության համար պետք է վճարել 3000 ՀՀ դրամ: Քաղաքացիների և ԶՀԿ-ների համար տեղեկատվության անվճար չլինելը սահմանափակում է հանրային վերահսկողության և շահերի բախման հետ կապված իրավիճակները բացահայտելու հնարավորությունը:

⁴⁷ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ընդունված ՀՀ օրենքը իրական սեփականատերերի վերաբերյալ թափանցիկության պահանջները ներառելու նպատակով փոփոխությունների է ենթարկվել 2019 թվականի ապրիլի 3-ին:

Ի լրումն, հանրային պաշտոնյաների շահերի բախումը կարող է բացահայտվել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերլուծության միջոցով, որը հասանելի է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ինտերնետային կայքում և ներառում է պաշտոնյաների լայն շրջանակ:

Ենթադրվում է, որ ժամանակի ընթացքում տվյալների այս բոլոր շտեմարանները պետք է փոխկապակցվեն միմյանց հետ, որպեսզի հեշտացնեն խնդրահարույց հարցերի վերհանումը, այդ թվում՝ արհեստական բանականության ալգորիթմների օգտագործման միջոցով:

«Կարմիր դրոշակներ». կոնկրետ նախագուշակյալ նշաններ

1. Մատակարարը չունի համապատասխան աշխատանքային փորձ, տվյալ ոլորտում չունի հեղինակություն կամ այն շատ փոքր է, ճանաչված չէ կամ հանդիսանում է միջնորդ ընկերություն:
2. Ընկերությունը կամ անհատը չունի բազային որակավորում, առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ կարողություններ կամ ակտիվներ, այդ թվում՝ աշխատակիցներ, ֆինանսներ, սարքավորում կամ տեխնիկական հմտություններ:
3. Ընկերության ֆինանսները սահմանափակ են, և այն չի ներկայացրել ֆինանսական երաշխիքներ կամ դրանք բավարար չեն:
4. Մատակարարի բաժնետերերի կառուցվածքը բարդ է, (օրինակ՝ ներառում է միջանկյալ ընկերությունների ցանց, անվանական բաժնետերեր⁴⁸, անանուն բաժնեմաս, չթողարկված պարտատոմսեր կամ տրաստ)⁴⁹, որը թաքցնում է ընկերության վերջնական սեփականատիրոջը կամ շահառուին:
5. Մատակարարը քաղաքական ազդեցություն ունեցող անձին կամ նրա ընկերությանը ներգրավում է որպես խորհրդատու կամ ծառայություններ մատուցող՝ երրորդ կողմ, որը ենթակա չէ հայտարարագիր ներկայացնելու և այլ պահանջների:
6. Ընտրված ընկերության բաժնետերը կամ շահաբաժինների կամ այլ եկամտի իրավունք ունեցող ենթակապալառուն ՊՆ պաշտոնյա է, ՊՆ պաշտոնյայի մերձավոր ազգական, քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ փոխկապակցված անձ:
7. Իրական շահառուները պաշտոնյայի ընկերներ են կամ ունեն այնպիսի ազգակցական հարաբերություն, որը չի կարգավորվում օրենքով, կամ օտարերկրյա քաղաքացի են, օտարերկրյա/միջազգային քաղաքական ազդեցություն ունեցող անձ, ինչը չի բացահայտվել ստուգման ժամանակ:

⁴⁸ Ընկերության փաստաթղթերը կարող են անձին դիտարկել որպես ներկայացուցիչ, կամ նա կարող է ունենալ ներկայացուցչին հատուկ բնութագիր, օրինակ՝ լինել բաժնետեր կամ տնօրեն մի շարք այլ կազմակերպություններում, աշխատել իրավաբանական ընկերությունում, կորպորատիվ ծառայություններ մատուցող ընկերությունում կամ այլ ոլորտում, որը մասնագիտացած է սովորաբար ընկերությունների (shell companies) ստեղծման կամ մասնավոր ակտիվների կառավարման գործում:

⁴⁹ Ընկերության բաժնետերերի ցանկը, անկախ այն բանից՝ նրանք ներառված են կորպորատիվ թղթապանակներում կամ այլ պաշտոնական փաստաթղթերում, թե ոչ, որը ոչ ամբողջությամբ է ներառում ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերը, կամ ընկերության բաժնետերերի կառուցվածքը ներառում է հաստատված, սակայն չթողարկված որոշ զգալի ծավալ: Որոշ, թեև ոչ բոլոր, դեպքերում սա կարող է կասկածներ առաջացնել առ այն, որ ընկերությունը որոշ անձեռնմխելի բաժնետոմսեր պահում է որևէ քաղաքական ազդեցություն ունեցող անձի համար:

Դեպքեր

Վերջին տարիներին եղել են մի շարք հնչեղ դեպքեր, երբ շահերի բախումն, ամենայն հավանականությամբ, ազդեցություն է ունեցել պաշտպանության բնագավառի գնումների գործընթացներում:

2018-2019 թվականներին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմատեղագրական բաժնի պետ գնդապետ Արթուր Գալստյանը մի քանի հարյուր միավոր նավիգացիոն սարքավորումների ձեռքբերման համար իրար հետևից երեք մրցույթ է կազմակերպել: Չնայած առաջին երկու մրցույթների արդյունքում հայտարարվել է հաղթողի անունը՝ դրանք առանց պատշաճ հիմնավորումների չեղարկվել են: Երրորդ մրցույթում ընտրվել է «Գեոչին գրուպ» ընկերությունը, որի հետ կնքվել է 30 մլն ՀՀ դրամ արժողությամբ գնման պայմանագիր: Առաջին երկու մրցույթների արդյունքների չեղարկումները կասկածներ են ծնել, ինչի արդյունքում ՀՀ ՊՆ-ն ներքին քննություն է սկսել և բացահայտել, որ «Գեոչին գրուպ» ընկերության սեփականատերը Ա. Գալստյանի քենին է (կնոջ քույրը), որն այն ժամանակին գնել է Ա. Գալստյանի հորից⁵⁰:

Ինչպես վերևում նշվել է, 2019 թվականի մայիսին «ORSIS ARMS» ՍՊԸ-ն հաղթել է ՀՀ ՊՆ հայտարարած ջերմատեսիլ սարքեր մատակարարելու մրցույթում, որը հետագայում չեղարկվել է: Պարզվել է, որ ընկերությունը 2017 թվականի ապրիլին հիմնադրվել էր ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմատեղագրական բաժնի պետ գնդապետ Նույն Արթուր Գալստյանի և միևնույն բաժնի նախկին պետ Գևորգ Մանուկյանի կողմից⁵¹: Ենթադրաբար, Ա. Գալստյանը և Գ. Մանուկյանը հատուկ հարաբերություններ են ունեցել նախագահ Սերժ Սարգսյանի և ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ, քանի որ կարողացել են վերջիններիս ծանոթացնել «ORSIS ARMS» ՍՊԸ-ի հիմնադիր «Պրոմտեխնոլոգիա» կորպորացիայի ղեկավարության հետ: 2019 թվականի հունիսին՝ վերը հիշատակված մրցույթը չեղարկելուց մեկ ամիս հետո, Ա. Գալստյանն իր 50 տոկոս բաժնեմասը փոխանցել է «ORSIS ARMS» ՍՊԸ ընկերության ներկայացուցիչ Ա. Սիրունյանի կնոջը՝ Վերգինե Սարգսյանին⁵²:

Պետք է նկատի ունենալ, որ «ORSIS ARMS» ՍՊԸ-ն ռուսական «ORSIS»-ի ներկայացուցիչն է Հայաստանում. ընկերություն, որը կապվում է Ռուսաստանի նախկին փոխվարչապետ Դմիտրի Ռոզոգինի անվան հետ⁵³: Իր հայտարարություններում Սիրունյանը նշել է, որ ORSIS-ը մրցույթին մասնակցել է ՀՀ ՊՆ պաշտոնյաների խնդրանքով⁵⁴: Հետաքրքիր է, որ մրցույթի չեղարկման դեմ «ORSIS ARMS»-ի կողմից դատարան հայտ ներկայացնելուց հետո⁵⁵ 2021

⁵⁰ Համաձայն www.e-register.am՝ «Գեոչին Գրուպ» ՍՊԸ-ն հիմնվել է Ժորիկ Գալստյանի կողմից, <https://www.e-register.am/am/companies/1211899>

⁵¹ Արշալույս Մոդեստյան, *Ինչու՞ է ՊՆ-ն չեղարկել ռուսական ORSIS ARMS-ի շահած մրցույթը*, Civilnet, 4 նոյեմբերի 2019թ., <https://civilnet.am/news/194699>. Առավոտ, *ՊՆ գնդապետին ասել են՝ դիմում գրի, գնա*. «Ժողովուրդ», 13 նոյեմբերի 2019թ., <https://www.aravot.am/2019/11/13/1077628>

⁵² Նարեկ Կիրակոսյան, *«Եղել է հանցավոր արարք»*. ռ՛վ և ի՛նչ նպատակով է փորձել ռազմականի փոխարեն որսորդական ռազմամթերք մատակարարել ՀՀ ՊՆ-ին. ORSIS-ի գործով Նոր մանրամասներ, Ֆակտոր, 4 նոյեմբերի 2019թ., <https://factor.am/196539.html>

⁵³ Organized Crime and Corruption Reporting Project, *Сынки Отечества: работа для своих*, 26 հունիսի 2018թ., <https://www.occrp.org/ru/investigations/8252-secret-deals-undermined-tech-firm-working-for-russian-military>

⁵⁴ Սարգիս Հարությունյան, *ՊՆ. Կասկածներ կան, որ ռուսաստանյան ընկերությունը նպատակ է ունեցել մատակարարել որսորդական, ոչ ռազմական նշանակության սարքեր*, Ազատություն ռադիոկայան, 12 փետրվարի 2020թ., <https://www.azatutyun.am/a/30430770.html>

⁵⁵ Հետք, *ՊՆ-ում ընթանում է ծառայողական քննություն, հարուցված է քրեական գործ*. մանրամասներ «Օրսիս»-ի չկայացած մրցույթի պայմաններից, 9 սեպտեմբերի 2019, <https://heta.am/hy/article/107093>

թվականի փետրվարին, ՀՀ սնանկության դատարանը լուծարման վարույթ սկսեց «ORSIS ARMS» ընկերության մրցակից «Ունիկում Ինժեներինգ» ՍՊԸ-ի նկատմամբ⁵⁶:

2021 թվականի փետրվարին ԱԱԾ-ն հայտարարեց անորակ, գնման առարկայի բնութագրի պահանջներին չբավարարող հրետանային արկեր մատակարարելու մեղադրանքով ՀՀ պաշտպանության նախարարի նախկին խորհրդական, զենքի և զինամթերքի վաճառքով զբաղվող «Mosston Engineering» ՍՊԸ-ի ղեկավար Դավիթ Գալստյանին (հայտնի որպես «պատրոն Դավոն») կալանավորելու մասին⁵⁷: ԱԱԾ-ն չէր մանրամասնել, թե ՊՆ որևէ պաշտոնյայի մեղադրանք առաջադրվել է մատակարարված անորակ արկերն ընդունելու համար:

«ORSIS ARMS»-ի ներկայացուցիչ Սիրունյանը պնդում էր, որ Դ. Գալստյանը ներգրավված է եղել պետական գնումների մի շարք այլ ինդրահարույց գործարքներում⁵⁸: Նա նաև հայտարարեց, որ ՀՀ ՊՆ-ն արտոնյալ, 0 տոկոս տոկոսադրույքով վարկ է տրամադրել Գալստյանի ընկերությանը⁵⁹: Իրավապահ մարմինները չեն նշել այս հայտարարության հետ կապված հանգամանքների քննության մանրամասներ, և պարզ չէ, թե արդյո՞ք վարկը տրվել է մրցակցային ընթացակարգով կամ ի՞նչ պայմաններ են նշված եղել պայմանագրում:

Ինչպես նշվել է վերևում, Դ. Գալստյանի գործարքների հետ կապված ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանին է առաջադրվել մեղադրանք խոշոր չափերով յուրացման համար:

Ո՞ր տեղեկատվությունը կարող է օգնել՝ կանխելու կոռուպցիոն այս ռիսկը

1. Ընկերությունների իրական շահառուների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվությունը պետք է ամբողջությամբ բացահայտվի և անվճար հասանելի լինի բոլոր շահագրգիռ կողմերի համար, որպեսզի դյուրինացնի հրապարակված տվյալների անկախ ստուգումը:
2. Որևէ ընկերության չպետք է թույլատրվի մասնակցել մրցույթի և պայմանագիր ստորագրել, եթե չի ապահովվել նրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության, ներառյալ՝ օտարերկրյա մասնակցության մասին, հրապարակումը:

⁵⁶ ՀՀ պաշտոնական հայտարարություններ, *Հայտարարություն «Ունիկում Ինժեներինգ» ՍՊԸ-ի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին*, 4 փետրվարի 2021թ., <https://www.azdarar.am/announcements/org/46/00812398>

⁵⁷ ԱԱԾ, *Հաղորդագրություն*, 1 փետրվարի 2021թ., <https://www.sns.am/hy/hayrորոգագրություններ/2021/02/01/hayrորոգագրություն-տեսանյութ/545>. Գայանե Սարիբեկյան, *Չենքի առքնվաճառքի կոռուպցիոն գործով ԱԱԾ-ն բերման է ենթարկել Դավիթ Գալստյանին*, 1 փետրվարի 2021թ., <https://www.azatutyun.am/a/31080269.html>. Sputnik Արմենիա, «Պատրոն Դավոն» *պատասխանել է ԱԱԾ-ին*, 2 փետրվարի 2021թ., <https://armeniasputnik.am/armenia/20210202/26302951/patron-davon-patasxanel-e-aac-in.html>. Սկրութչ Կարապետյան, *Ո՞վ է Հայաստանում «Կալաշնիկով» արտադրողը. Լիբիա մատակարարած զենքից մինչև վճարումներ Պորոչենկոյի ընկերությանը*, Civilnet, 19 փետրվար 2019թ., <https://civilnet.am/news/189241>

⁵⁸ Հարցազրույց Ա.Սիրունյանի հետ. *Չգիտեմ՝ Դավիթ Գալստյանը որ գործով է որպես մեղադրյալ, բայց քննությունը պետք է պարզի, թե ինչու են 250 դրամանոց բրոնժիլետները 1300 դոլարով գնել*, ArmDaily, 19 հունվարի 2021թ., <https://armdaily.am/?p=123588&l=am>

⁵⁹ 1in.am, *ՊՆ-ն 3.5 մլն դոլար վարկ է տվել Պատրոն Դավոնի ընկերության*, 1 փետրվարի 2021թ., https://www.youtube.com/watch?v=-BB9bM_ZmKc

3. Հայտերի գնահատման արձանագրություններում պետք է ներառվի հայտարարություն գնահատող հանձնաժողովի անդամների և գնման համակարգողի մոտ շահերի բախման բացակայության կամ առկայության, ինչպես նաև մրցույթի մասնակիցների հետ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, ՊՆ պաշտոնյաների կամ նրանց ընտանիքի անդամների կապի մասին՝ նշելով համապատասխան անձանց անունները:
4. ՊՆ վերահսկողական գործառույթը՝ մասնակից ընկերությունների, հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից հայտարարված տեղեկատվության իսկությունը ստուգելու առումով պետք է ուժեղացվի՝ առնվազն ապահովելով նրա հասանելիությունը ընկերությունների էլեկտրոնային ռեգիստրին և գույքի ու եկամուտների հայտարարագրերի շտեմարանին:
5. Պետք է հրապարակվեն համապատասխան օրենսդրության կիրարկման մանրամասները (օրինակ՝ թե քանի՞ ընկերություն է հեռացվել մրցույթից իրական շահառուների մասին ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելու համար) իրավակիրարկման հանդեպ հանրության վստահությունը բարձրացնելու համար:

 **Կարմիր դրոշակ 4. Անարդյունավետ պլանավորում և ոչ պաշտոնական ձեռքբերումներ**

Նկարագրություն

Հայաստանում ակնհայտ խնդիրներ կան ռազմական գնումների պլանավորման գործընթացում, ինչը՝ հատկապես տեսանելի դարձավ 2020 թվականի Արցախյան պատերազմի ժամանակ:

Վատ պլանավորումը հիմնականում հանգեցնում է նրան, որ կարիքները պատշաճ չեն բացահայտվում, և առկա բացերը չեն լուծվում, ինչը կարող է լրջորեն ազդել մարտական ծառայության և, ի վերջո, երկրի ու դրա բնակչության պաշտպանության վրա: Տեսականորեն՝ գույքային պաշարների բացերը կարելի է փակել քաղաքացիների միացյալ ջանքերով, ինչը, մասնավորապես, տեղին կարող է համարվել Հայաստանի նման երկրում, որտեղ բանակը մեծամասամբ հիմնվում է երիտասարդ տղաների ժամկետային զորակոչի վրա (պայմանագրային հարաբերությունների վրա կառուցված պրոֆեսիոնալ բանակի որոշ բաղադրիչներով): Նաև արտասովոր չէ պատերազմի ժամանակ քաղաքացիների կողմից իրենց բանակին տրամադրվող աջակցությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, կարևոր է ընդունել, որ քաղաքացիների կողմից ժամանակ առ ժամանակ տրամադրվող նվիրատվությունների ու նվիրաբերությունների վրա հենվելը վատ պլանավորման նշան է: Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը պետք է, որպես նորմ, հիմնված լինի կարիքների գնահատման վրա և բխի ոլորտային ռազմավարությունից, ծրագրերից և միջոցառումներից: Բացի այդ, գնումների համակարգից դուրս ապրանքների ձեռքբերումը ստեղծում է այլ ուրույն կոռուպցիոն ռիսկեր ու խնդիրներ:

Նվիրատվությունների ու նվիրաբերությունների պրակտիկան մի շարք հարցեր է առաջացնում այն մասին, թե ինչպե՞ս է կարիքների կամ առաջնահերթությունների վերաբերյալ տեղեկատվությունը հայտնի դարձել կամ արտահոսել, ինչպե՞ս է առարկան ձեռք բերվել, ինչպե՞ս են Նոր ակտիվները փաստաթղթավորվել և կառավարվել, և ո՞րոնք են «նվիրատուների» մոդելները: Երբեմն, կարող է նաև պարզ չլինել, թե ինչպե՞ս են անհատները կամ ոչ պետական մարմինները ձեռք բերում ռազմական գույք, տեղափոխում այն Հայաստան, անցկացնում օտար երկրների և Հայաստանի մաքսակետերով և առաքում զինված ուժերին:

Օրինակ՝ որոշ նվերներ կարող են հարցականի տակ դնել պետական և ծառայողական գաղտնիքի մասին օրենսդրության կիրարկման արդյունավետությունը: Հատկապես անորոշ է, թե ի՞նչ խողովակներով են «նվիրատուներն» իմանում բանակի կարիքների մասին, եթե ռազմական պլանները հանրությանը հայտնի չեն: Բացի այդ, եթե գնումը չի անցել գնումների պաշտոնական ընթացակարգերով, ինչպե՞ս է գնահատվում ստացված ապրանքների որակը, կամ ինչպե՞ս են իրերը գրանցվում պահեստում և պահպանվում, կամ ինչպե՞ս է այս տեղեկատվությունը տրամադրվում վերահսկող կամ հաշվեքննիչ մարմիններին:

Նվերներին առնչվող անբավարար թափանցիկությունը անհատներին և կազմակերպություններին հնարավորություն է տալիս չարաշահել իրենց վստահված իշխանությունը, օրինակ՝ ստացած ապրանքների պահուստավորման կամ կառավարման ժամանակ: Հայաստանի պետական և տեղական կառավարման մարմինների պրակտիկան ցույց է տալիս, որ նվերների և նվիրատվությունների տեսքով տրամադրվող օժանդակության դիմաց «նվիրատուները» կարող են ակնկալել որոշ փոխադարձ «լավություն»⁶⁰: Մեկ այլ ռիսկ է այն, որ նվերները կարող են չհասնել հասցեատերերին և չծառայել ի սկզբանե հայտարարված նպատակին:

ՀՀ օրենսդրությունը չունի պետական իշխանություններին, այդ թվում՝ բանակին տրամադրվող նվերները և նվիրատվությունները կարգավորող հատուկ Նորմեր, և վերը նշված հարցերը հիմնականում մնում են անպատասխան: Գաղտնիության դրույթներով պաշտպանվելու պարագայում ազգային անվտանգությանն ու պաշտպանությանն առնչվող՝ պետական գնումների համակարգից դուրս կատարված ձեռքբերումներն առավել ևս խնդրահարույց են:

«Կարմիր դրոշակներ». կոնկրետ նախագուշակական նշաններ

- Երրորդ անձանց կողմից հրապարակային կոչեր են հնչում զինված ուժերի համար որևէ գաղտնի կամ ոչ գաղտնի ապրանքի, աշխատանքի, ծառայության գնման համար կատարելու նվիրաբերություն կամ կազմակերպելու դրամահավաք:
- Հրապարակային կոչերն անորոշ են, չեն պարունակում հստակ տեխնիկական բնութագրեր, և պարզ չէ, թե արդյո՞ք պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համար կատարվել է կարիքների գնահատում:
- Կատարվում են սարքավորումների կամ այլ՝ գաղտնի կամ ոչ գաղտնի պարագաների նվիրաբերություններ բանակին, որոնց համար նախապես չեն եղել գնումների մրցույթներ:

⁶⁰ Այլ ոլորտներում եղել են դեպքեր, երբ նվիրատուն շինարարություն կատարելու կամ հանք շահագործելու թույլտվություն է ստացալ նվերը ստացող մարմնից:

- Գնումների պլանները կամ հայտարարությունները չեն համապատասխանում ազգային անվտանգության կամ պաշտպանության ռազմավարությանը:
- Մրցույթների հայտարարությունները բավարար վաղ չեն հրապարակվում կամ տրվում են շատ կարճ ժամանակով:

Դեպքեր

Արցախյան 44-օրյա պատերազմին առնչվող որոշ պատմություններ հարցեր են առաջացնում պաշտպանության բնագավառի գնումների պլանավորման որակի առնչությամբ:

2019 թվականի գարնանից ի վեր ՀՀ ՊՆ-ն փորձեր է կատարել ձեռք բերելու ջերմատեսիլ սարքեր: Տպավորություն կա, որ տվյալ գնումն ավարտին չհասցնելը պատերազմի ժամանակ հանգեցրել է դրանց պակասուրդի՝ մի շարք այլ պարագաների հետ մեկտեղ, և արձանագրվել են դեպքեր, երբ ինդիորը լուծելու և բանակի կարիքները բավարարելու համար քաղաքացիներն են ձեռք բերել այդ սարքերը⁶¹:

44-օրյա պատերազմի ժամանակ որոշ անհատներ նախաձեռնել էին արշավ՝ ձեռք բերելու վրաններ և զրահաբաճկոններ զինծառայողների համար: Չնայած ՀՀ ՊՆ ներկայացուցիչները պաշտոնապես հերքել են բանակում դրանց կարիքը, ռազմաճակատից և զինվորների հարազատներից ստացվող իրական պատմությունները վկայում են, որ դրանց կարիքի վերաբերյալ այդ պնդումները ճիշտ էին:

Պետք է նշել, որ հանրային սվիրաբերություններ տեղի են ունեցել ոչ միայն պատերազմի ժամանակ: 2015 թվականին լրատվամիջոցները տեղեկություն հրապարակեցին հայկական շոու-բիզնեսի որոշ ներկայացուցիչների կողմից շփման գծում ծառայող զինվորներին հեռադիտակներ սվիրելու մասին⁶²: Կրկին՝ հայտնի չէ, թե ինչպե՞ս է կարիքի մասին տեղեկատվությունը հայտնի դարձել, ինչի՞ հիման վրա են սվիրաբերողները որոշել սվիրել հեռադիտակ, այլ ոչ մեկ այլ պարագա և արդյո՞ք սվիրված պարագաները եղել են պահանջվող որակի:

Ո՞ր տեղեկատվությունը կարող է օգնել՝ կանխելու կոռուպցիոն այս ռիսկը

1. Գնումների պլանները պետք է մշակվեն ազգային անվտանգության և/կամ պաշտպանության ռազմավարության հիման վրա:
2. Նվիրատվությունների և ֆինանսական հանգանակության կոչերը, դրա անհրաժեշտության դեպքում, պետք է կատարվեն ՊՆ-ի կողմից:
3. Ոչ գաղտնի պարագաների դեպքում ՊՆ-ն պետք է հրապարակի բոլոր նվերների և ֆիզիկական ու իրավաբանական անձանցից ստացած ֆինանսական հանգանակությունների միջոցով ձեռքբերված միավորների վերաբերյալ տեղեկություններ: Տեղեկատվությունը պետք է պարբերաբար թարմացվի և առնվազն ներառի հետևյալը.

⁶¹ Հարցազրույց Միքայել Նահապետյանի հետ «Ինչու՞ էր մեր ՄՈՒ-ն անձանոթ ժամանակակից պատերազմին, կապի միջոցներն ու ջերմատեսիլ սարքերն ինչու՞ էին քաղաքացիները գնում», Իրատես, 24 նոյեմբերի 2020թ., <http://www.irates.am/hy/1606163445>

⁶² Չրույց ՀՀ զինված ուժերի սպառազինության վարչության պետ, գեներալ-մայոր Սելս Զիլինգարյանի հետ, «Հայրենասիրությունը ամենապարզ վենքս է», Հայ զինվոր, 10 սեպտեմբերի 2015թ., <http://www.hayzinvor.am/33706.html>

- նվերը տվող անձի անունը կամ կազմակերպության (այդ թվում՝ օտարերկրյա) անվանումը,
 - նվերը տվող անձի բնակության կամ կազմակերպության (կամ նրա գլխամասի) գտնվելու երկիրը,
 - նվերի կամ նվիրատվության մանրամասները, այդ թվում՝ քանակը, շուկայական արժեքը և ստանալու օրը, ստանալու ապացույցը/ստացագիրը,
 - տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է նվիրատուն տեղեկացել պաշտպանական կարիքների և առաջնահերթությունների մասին,
 - նվիրատուների կողմից տրամադրված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների կառավարման ընթացակարգը, ներառյալ, թե ինչպես են դրանք ստացվել, գույքագրվել, օգտագործվել և տնօրինվել:
4. ՊՆ-ն պետք է պահպանի գաղտնի և ոչ գաղտնի նվիրատվությունների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, և դրանք հասանելի դարձնի խորհրդարանական վերահսկողության համար և Հաշվեքննիչ պալատին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտպանության և անվտանգության հաստատությունների բարեվարքությունը, պաշտպանության հետ կապված որոշումների, ներառյալ՝ գնումների, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը առաջնահերթ նշանակություն ունեն Հայաստանի հանրության օրակարգում, հատկապես՝ 2020 թվականի պատերազմից հետո:

Այս զեկույցում բացահայտված ռիսկերը կարելի է նվազեցնել ստորև ներկայացվող եղանակներով՝ բարելավելով տվյալների և ընթացակարգերի թափանցիկությունը, ինչպես նաև՝ ամրապնդելով ընդհանուր վերահսկողական ընթացակարգերը, որոնք մանրամասն ներկայացված են այս փաստաթղթի Հավելվածում:

Բարելավել տվյալների և ընթացակարգերի թափանցիկությունը

Հանրությանը հասանելի և պատեհ ժամանակին ներկայացվող պատշաճ ծավալով տեղեկատվությունը պաշտպանության բնագավառի պատասխանատու պաշտոնյաներին հնարավորություն կտա գործել բաց և թափանցիկ: Ուստի, ՀՀ ՊՆ-ն և մյուս առնչվող կառույցները պետք է պարբերաբար հրապարակեն տվյալներ, որոնք թույլ կտան բացահայտել և/կամ նվազեցնել գնման գործընթացում առկա որոշ ռիսկերը:

1. Որևէ գույքի, աշխատանքի կամ ծառայության անհրաժեշտությունը, դրանց համատեղելիությունը և փոխարացվելիությունը արդեն իսկ առկա այլ համակարգերի և սարքերի հետ պետք է վերլուծվի, հիմնավորվի և հաստատվի պատասխանատու պաշտոնյայի կողմից, ինչպես նաև ներառի հաստատման հիմքերը:
2. Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերը պետք է մշակվեն տվյալ զինատեսակը, զինամթերքը, ծառայությունը կամ աշխատանքն օգտագործող ստորաբաժանման հետ, որպեսզի երաշխավորվի համատեղելիությունը և փոխարացվելիությունը:

3. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերը պետք է լինեն հստակ ձևակերպված և ստանդարտացված, որպեսզի զերծ լինեն սխալ մեկնաբանություններից ու շահարկումներից և չտան առիթ կողմնակալ որոշումների համար:
4. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման բնութագրերը պետք է հրապարակվեն, եթե դրանք չեն խախտում գաղտնիության պահանջները, իսկ բնութագրերի գաղտնագրման պարագայում պետք է լինի հստակ հիմնավորում:
5. «Գնումների մասին» ՀՀ օրենքը պետք է թույլ տա, իսկ կառավարությունը պետք է մշակի և հրապարակի ազգային անվտանգության համար անհրաժեշտ իրերի խմբերը, որոնք պետք է ձեռք բերվեն բացառապես պետության կողմից և բացառապես՝ արտադրողից:
6. Մրցույթի հայտարարություն տալիս կամ մրցույթին մասնակցության հրավեր ուղարկելիս ՊՆ-ն պետք է ունենա իր կողմից կատարվելիք գնման՝ գրասենյակային խորը ուսումնասիրությունների վրա հիմնված «գնահատված արժեքը» և հայտատուների կողմից անհիմն գնային առաջարկներ ստանալու դեպքում պետք է բացահայտի սեփական հաշվարկները:
7. ՊՆ-ն պետք է վերանայի միջազգային գործընկերության համաձայնագրերի շրջանակներում «էժան» ձեռքբերումների իր մոտեցումը և ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ժամանակ կիրառի ավելի խիստ կանոններ, այդ թվում՝ գնման առարկայի բնութագրերը մշակելիս, պայմանագրի իրականացման պայմանները սահմանելիս, որակի վերահսկողության և այլ գործառույթներ իրականացնելիս:
8. ՀՀ կառավարությունը և ՊՆ-ն պետք է պարբերաբար կատարեն Հայաստանի գնումների ընթացակարգերի վերլուծություն՝ Հայաստանի պաշտպանության և ազգային անվտանգության հետ կապված հարցերում բացառելու որևէ այլ պետությունից կախվածությունը կամ վերջինիս գերիշխանությունը:
9. Ընկերությունների իրական շահառուների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվությունը պետք է ամբողջությամբ բացահայտվի և անվճար հասանելի լինի բոլոր շահագրգիռ կողմերի համար, որպեսզի ոչուրիևացնի հրապարակված տվյալների անկախ ստուգումը:
10. Որևէ ընկերության չպետք է թույլատրվի մասնակցել մրցույթի և պայմանագիր ստորագրել, եթե չի ապահովվել նրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության, ներառյալ՝ օտարերկրյա մասնակցության մասին, հրապարակումը:
11. Հայտերի գնահատման արձանագրություններում պետք է ներառվի հայտարարություն գնահատող հանձնաժողովի անդամների և գնման համակարգողի մոտ շահերի բախման բացակայության կամ առկայության, ինչպես նաև մրցույթի մասնակիցների հետ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, ՊՆ պաշտոնյաների կամ նրանց ընտանիքի անդամների կապի մասին՝ նշելով համապատասխան անձանց անունները:
12. ՊՆ վերահսկողական գործառույթը՝ մասնակից ընկերությունների, հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից հայտարարված տեղեկատվության իսկությունը ստուգելու առումով պետք է ուժեղացվի՝ առնվազն ապահովելով նրա հասանելիությունը ընկերությունների էլեկտրոնային ռեգիստրին և գույքի ու եկամուտների հայտարարագրերի շտեմարանին:

13. Պետք է հրապարակվեն համապատասխան օրենսդրության կիրարկման մանրամասները (օրինակ՝ թե քանի՞ ընկերություն է հեռացվել մրցույթից իրական շահառուների մասին ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելու համար) իրավակիրարկման հանդեպ հանրության վստահությունը բարձրացնելու համար:
14. Գնումների պլանները պետք է մշակվեն ազգային անվտանգության և/կամ պաշտպանության ռազմավարության հիման վրա:
15. Նվիրատվությունների և ֆինանսական հանգանակության կոչերը, դրա անհրաժեշտության դեպքում, պետք է կատարվեն ՊՆ-ի կողմից:
16. Ոչ գաղտնի պարագաների դեպքում ՊՆ-ն պետք է հրապարակի բոլոր նվերների և ֆիզիկական ու իրավաբանական անձանցից ստացած ֆինանսական հանգանակությունների միջոցով ձեռքբերված միավորների վերաբերյալ տեղեկություններ: Տեղեկատվությունը պետք է պարբերաբար թարմացվի և առնվազն ներառի հետևյալը.
 - նվերը տվող անձի անունը կամ կազմակերպության (այդ թվում՝ օտարերկրյա) անվանումը,
 - նվերը տվող անձի բնակության կամ կազմակերպության (կամ նրա գլխամասի) գտնվելու երկիրը,
 - նվերի կամ նվիրատվության մանրամասները, այդ թվում՝ քանակը, շուկայական արժեքը և ստանալու օրը, ստանալու ապացույցը/ստացագիրը,
 - տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է նվիրատուն տեղեկացել պաշտպանական կարիքների և առաջնահերթությունների մասին,
 - նվիրատուների կողմից տրամադրված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների կառավարման ընթացակարգը, ներառյալ, թե ինչպես են դրանք ստացվել, գույքագրվել, օգտագործվել և տնօրինվել:
17. ՊՆ-ն պետք է պահպանի գաղտնի և ոչ գաղտնի նվիրատվությունների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, և դրանք հասանելի դարձնի խորհրդարանական վերահսկողության համար և Հաշվեթևնիչ պալատին:

Վերանայել տեղեկատվությունը գաղտնի դասակարգելու պահանջները

Վերը ներկայացված առաջարկությունները կյանքի կոչելու համար ամենից առանցքային հարցը տեղեկության դասակարգումն ու գաղտնագրումն է, որը հաճախ արվում է կամայական կերպով, ինչն էլ ազդում է պաշտպանության բնագավառի գնումների ընդհանուր օրինավորության վրա: Այդ առումով.

1. Տվյալների և տեղեկատվության գաղտնիության չարաշահումը բացառելու նպատակով ՀՀ կառավարությունը պետք է հստակեցնի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն տեղեկատվությունը գաղտնիության 3 մակարդակներում դասակարգելու չափանիշները, օրինակ՝ որոշելով այդ տեղեկատվության կարևորությունը ազգային անվտանգության տեսանկյունից կամ դրա բացահայտման դեպքում հասցվող հնարավոր վնասի մեծությունը:

2. Ոչ գաղտնի գնումների դեպքում ստորագրված պայմանագրերը և դրանցում կատարված փոփոխությունները պետք է հրապարակվեն գնումների ընդհանուր էլեկտրոնային համակարգում կամ ՊՆ կայքում՝ նշելով գների, առաքման ժամկետների և մրցույթի հաղթողին որոշելուց հետո պայմաններում կատարված փոփոխումները:
3. Գաղտնի գնումների դեպքում ՊՆ-ն պետք է կատարի նույն գրառումները և դրանք տրամադրի վերահսկող և հաշվեքննիչ մարմիններին:
4. Բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հետ մեկտեղ պետք է գոյություն ունենա մեխանիզմ, որով ՊՆ-ն ազգային անվտանգության հետ կապված գնումների վերաբերյալ զգայուն տվյալներն ու պայմանագրերը կտրամադրի անկախ, ներքին և արտաքին հսկողական/աուդիտորական մարմիններին, օրինակ՝ ներքին աուդիտի ստորաբաժանմանը և խորհրդարանական հանձնաժողովին, որոնք բոլորը պետք է ունենան հասանելիություն պետական գաղտնիք հանդիսացող գնումների վերաբերյալ տվյալներին:
5. Գաղտնիության ժամկետը լրանալուց հետո ՊՆ-ն պետք է հրապարակի ազգային անվտանգությանն առնչվող գնումների վերաբերյալ տվյալները և պայմանագրերը, իսկ դրանցով բացահայտվող որոշ խոշոր իրավախախտումների դեպքում պետք է հնարավոր լինի իրականացնել քրեական հետապնդում:

Անդրադարձ այլ հնարավոր գործոններին

Հետազոտությունը բացահայտել է մի շարք նպաստող գործոններ, որոնք բացահայտված «կարմիր դրոշակների» հետ միասին ավելացնում են պաշտպանության բնագավառի գնումներում կոռուպցիոն ռիսկերը: Դրանք ներառում են հետևյալը.

1. Էլեկտրոնային գնումների հայկական Armeps համակարգը միշտ չէ, որ լավ է աշխատում և զգալիորեն երկար ժամանակահատվածներում եղել է խափանված: Որպես հետևանք՝ գնումների որոշ գործարքներ հետաձգվել են, որոշներն արվել են թղթային տարբերակով կամ մեկ անձից գնման եղանակով⁶³:

ՀՀ ֆինանսների նախարարությանն առաջարկվում է պատեհ ժամկետներում քննել էլեկտրոնային գնումների համակարգի խափանումների պատճառները և լուծում տալ դրանց՝ հրապարակելով քննության արդյունքները, որպեսզի կանխվի նման խնդիրների ի հայտ գալը հետագայում: Միևնույն ժամանակ, ՊՆ-ն պետք է հրապարակի Armeps-ի խափանման ժամանակահատվածում համակարգից դուրս կնքված պայմանագրերի մանրամասները:

2. Տվյալների մեծ շրջանակի գաղտնագրումը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել ներքին և արտաքին վերահսկողության ծավալի և որակի մասին: Ներքին հսկողության հաշվետվությունները հանրությանը հասանելի չեն, իսկ Հաշվեքննիչ պալատի վերահսկողությունը տեսանելի չէ: Օրինակ՝ հայտնի է 2018 և 2019 թվականներին տեղի ունեցած երկու նիստերի մասին, որոնց ժամանակ նշվել է պաշտպանության բնագավառում աուդիտ իրականացնելու ծրագրերի մասին, սակայն այդ մասին տեղեկատվություն 2018 և 2019 թվականների տարեկան

⁶³ Առավոտ, *Գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու դեպքում, հնարավոր էր խնայել առնվազն 2.7 մլն դրամ. Մանե Թանդիյանը՝ ցեխնտի ձեռքբերման մասին ՊՆ-ի պարզաբանման վերաբերյալ*, 13 սեպտեմբերի 2019թ., <https://www.aravot.am/2019/09/13/1065583>

հաշվետվություններում առկա չէ: Անհայտ օրով թվագրված տեղեկատվություն կա գնումների վերահսկողության, արտաբյուջետային միջոցների ձևավորման և ծախսման մասին, սակայն այն չի հստակեցնում կապը վերը նշված ծրագրերի հետ: Եթե այլ բնագավառներում կարելի է հետամուտ լինել հանրային վերահսկողության միջոցով, պաշտպանությանն առնչվող գնումների մեծ ծավալի գաղտնագրումը տվյալ բնագավառը թողնում է վերահսկողությունից դուրս⁶⁴:

Պաշտպանության բնագավառի գնումների վերահսկողության արդյունավետության բարելավմանը միտված միջոցառումների հետ միաժամանակ կարևոր է երաշխավորել, որ հանրությունը տեսնի վերահսկողական ինստիտուտների աշխատանքի որակը: ՊՆ-ն պետք է հրապարակի իր գնումների և դրա յուրաքանչյուր փուլի վերահսկողության համար պատասխանատու մարմինների վերաբերյալ տեղեկատվությունը:

3. Ինչպես վկայում են ԿՊՕՅ-ն և ուսումնասիրված դեպքերը, պաշտպանության բնագավառի գնումների խորհրդարանական վերահսկողությունն արդյունավետ և բավարար չի իրականացվում: Ավելին, ՀՀ Սահմանադրությունը և օրենքները պաշտպանության կամ այլ բնագավառում պատգամավորներին չեն տալիս վերահսկողական իրավասությունների ավելի լայն շրջանակ:

Կարևոր է, որպեսզի հնարավորության դեպքում շրջանակն ընդլայնվի, որպեսզի թույլ տա ապահովել վերահսկողության ավելի ընդարձակ, խորը և նախաձեռնողական մոտեցում: Օրինակ՝ կարելի է խորհրդարանական ընդդիմության առաջնորդին և մեկ այլ ներկայացուցչի թույլ տալ ծանոթանալ գնումների հետ կապված բոլոր փաստաթղթերին (ներառյալ՝ հիմնավորումներին, ծրագրերին, պայմանագրերին, միջազգային գործարքներին, նվիրատվություններին և այլն), իսկ խնդիրների բացահայտման դեպքում նրանք պետք է կազմակերպեն դրանց լուծումների եղանակների վերաբերյալ քննարկումներ:

Կարևոր է, որպեսզի ՀՀ կառավարությունը, ՊՆ-ն, Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, Ազգային անվտանգության խորհուրդը, պետական և ոչ պետական մյուս դերակատարներն օգտվեն ԿՊՕՅ-ի արդյունքներից և ուսումնասիրեն աշխարհի այլ երկրների լավագույն փորձը, որպեսզի բարելավեն Հայաստանի կատարողականը տարբեր առանցքային հարցերում, պլանավորումը կատարելագործելու, տվյալների գաղտնագրումը հստակեցնելու, խորհրդարանական վերահսկողությունն ամրապնդելու և այլ նպատակներով:

⁶⁴ ՀՀ Հաշվեքննիչ պալատ, *Հաշվեքննիչ պալատը հերթական նիստ է անցկացրել*, 9 հուլիսի 2019թ., <https://armsai.am/hy/content/hazhveknishy-palatat-hertshական-nisut-e-ansgkagrtel-4>: ՀՀ Հաշվեքննիչ պալատի որոշում, 7 փետրվարի 2019թ., <http://armsai.am/files/decrees/2019/voroshum2.1.pdf>: *Հաշվեքննիչ պալատը նիստ է անցկացրել*, 3 սեպտեմբերի 2018թ., <https://armsai.am/hy/nist03.09>

ՀԱՎԵԼՎԱԾ. Գնումների գործընթացի յուրաքանչյուր փուլի վերահսկողական հարցադրումներ⁶⁵

Այս բաժնում ներկայացվում են մի շարք հարցադրումներ, որոնք կարող են բարձրացվել գնումների համար պատասխանատուների, իրավապահների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և վերահսկող մարմինների կողմից պաշտպանության բնագավառի գնումների համապատասխան փուլերում, ներառյալ՝ պլանավորման, գնումը նախապատրաստելու, պատշաճ գործելակերպի (due diligence) ստուգման և հաղթողին որոշելու, պայմանագրի կատարման և ավարտի փուլերը, ինչը կօգնի բարելավել գնումների ընթացակարգերը և ուժեղացնել վերահսկողությունը:



Պլանավորման փուլ

- Արդյո՞ք գնումը նախօրոք պլանավորված էր, և արդյո՞ք այն համահունչ է պաշտպանության և անվտանգության ռազմավարությանը (արդյո՞ք վերջինս առկա է): Եթե գնումը համահունչ չէ ռազմավարությանը կամ պլաններին, արդյո՞ք այն կատարվել է՝ ըստ անհրաժեշտության, և եթե այո, արդյո՞ք հրատապությամբ պայմանավորված կամ որևէ այլ իրավաչափ հիմնավորում ունի:
- Ո՞վ է պահանջում/պնդում ձեռք բերել ապրանքը կամ ծառայությունը. ՀՀ կառավարությունը, ՊՆ ստորաբաժանումներից մե՞կը, մատակարար՞ը, քաղաքական ազդեցություն ունեցող որևէ ա՞նձ, ա՞յլ:
- Արդյո՞ք ՊՆ-ն իսկապես ունի տվյալ ապրանքի, ծառայության կամ աշխատանքի կարիքը: Արդյո՞ք կարիքը պատշաճ հիմնավորված է: Արդյո՞ք ձեռքբերվող ապրանքը, ծառայությունը և աշխատանքը համատեղելի են ՊՆ տրամադրության տակ առկա այլ սարքերի և ծրագրային ապահովումների հետ: Արդյո՞ք այն լրացնում է ՀՀ զինված ուժերի կարողությունները:
- Արդյո՞ք ձեռքբերումը համակարգված և ինտեգրված է համապարփակ պլանում, որպեսզի հնարավոր լինի ժամանակին և խելամիտ գնով բավարարել ՊՆ կարիքները:

⁶⁵ Հավելվածը հիմնված է ԹԻՊԱ նախաձեռնության և Թրանսփարենսի Ինթերնեշնլ Ուկրաինայի Վեց կարմիր դրոշակներ. Ուկրաինայի պաշտպանության ոլորտի գնումներում ամենից հաճախ հանդիպող կոռուպցիոն ռիսկերը հաշվետվության «Ինչպես բարեփոխել ներքին և արտաքին հսկողությունը. Հարցեր գնումների գործընթացի յուրաքանչյուր փուլի համար» բաժնի վրա, 2018թ., https://www.transparency.org.uk/sites/default/files/pdf/publications/Ukraine_Six_Red_Flags_Eng.pdf, էջեր 27-29

Մրցույթի փուլ

- Ո՞վ է որոշել ձեռքբերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների շրջանակը և պայմանագրին ներկայացվող տեխնիկական պահանջները: Որքա՞ն ճշգրիտ և մանրամասն են սահմանված գնման առարկայի բնութագրերը:
- Արդյո՞ք շրջանակը և պահանջները օբյեկտիվորեն հիմնավորված են, և արդյո՞ք դրանք ստուգվել և հաստատվել են մեկ այլ ստորաբաժանման կողմից:
- Արդյո՞ք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների շրջանակը մշակող պաշտոնյան չունի շահերի բախում:
- Արդյո՞ք շրջանակը և պահանջները տալիս են մրցակցության ապահովման առավելագույն հնարավորություն (այսինքն՝ չեն սահմանվել այնքան նեղ, որպեսզի նախապատվությունը տրվի մրցույթի մեկ մասնակցի կամ դուրս մղվեն ուրիշները) կամ արդյո՞ք դրանք խիստ աղոտ են (այդպիսով խոչընդոտներ ստեղծելով հայտատուների համար):
- Արդյո՞ք ՊՆ-ն գնման վերաբերյալ հնարավորինս տարածել է հայտարարությունը: Որքա՞ն երկար ժամանակ է հայտարարությունը եղել բաց:
- Եթե գնման առարկան առևտրային միավոր է կամ ծառայություն, արդյո՞ք գոյություն ունի տվյալ ապրանքի կամ ծառայության առևտրային շուկա:
- Արդյո՞ք պատվերն անհարկի մեծ է ծավալով, արդյո՞ք ավելորդ շտապողականությամբ է ձեռքբերվում, և արդյո՞ք այն դուրս է մղում այլ կամ ավելի փոքր մրցակիցների:
- Արդյո՞ք կատարվել է շուկայի հետազոտություն՝ հավաստիանալու, թե քանի ընկերություն է մատակարարում այս կամ ապրանքը կամ ծառայությունը, ի՞նչ ժամկետներում և ի՞նչ շուկայական գնով:
- Արդյո՞ք ՊՆ-ն առավելագույնս արդյունավետ է օգտագործում գնելու իր կարողությունները (այսինքն՝ արդյո՞ք խոշոր ծավալով ձեռքբերումն ավելի տեղին է, քան փոքր ծավալներով հաճախակի ձեռքբերումները, արդյո՞ք խոշոր ծավալով գնման դեպքում առաջարկվող գինը շուկայի համեմատ ավելի մրցակցային է):
- Արդյո՞ք պայմանագրային պահանջների «փունջը» հանգեցրել է սահմանափակ կամ ոչ իրական մրցակցության: Որքա՞ն է պայմանագրի իրականացման խելամիտ ժամկետը: Երկարաժամկետ պայմանագրի կնքումը կարող է ժամանակ և ռեսուրսներ խնայելու հնարավորություն տալ՝ նվազեցնելով նոր մրցույթներ հայտարարելու հաճախականությունը, սակայն, մյուս կողմից, անհարկի երկար ժամկետով պայմանագիրը նախապատվություն է տալիս մեկ ընկերության և կարող է լինել ոչ մրցակցային:

Պատշաճ գործելակերպի (due diligence) ստուգում և հաղթողի որոշում

- Լիարժեք և բաց մրցույթ չիրականացնելու պարագայում ո՞րն է եղել դրա հիմնավորումը:
- Արդյո՞ք առկա են անձնական կամ կազմակերպական շահերի բախումներ, որոնք կարող են կողմնակալ հետևանքներ ունենալ հաղթողին որոշելու ժամանակ: Օրինակ, արդյո՞ք կա «պտտվող դռան» (revolving door) երևույթ:
- Արդյո՞ք համակողմանիորեն ուսումնասիրվել է բոլոր մրցակիցների գործունեությունը և պատասխանատվությունը:

- Ինչպե՞ս է ընտրված մասնակիցը ֆինանսավորելու պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը: Վարկի միջոցով:
- Արդյո՞ք մինչև հաղթողին որոշելն իրականացվել է մրցույթի մասնակիցների նախատեսած ծախսերի և վերադիր տոկոսի հաշվարկի աուդիտ:
- Արդյո՞ք հիմնական հայտատուները ներկայացրել են ենթակապալառուների հետ աշխատանքի ծրագիր: Քանի՞ ենթակապալառու և ենթակապալառուների քանի՞ մակարդակ է նախատեսում հիմնական կապալառուն:
- Արդյո՞ք հայտնի են ենթակապալառուի վերաբերյալ այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են հասցեն, տնօրենները, իրական շահառուները, աշխատանքային փորձը:
- Քանի՞ հայտ է ստացվել: Մրցակցային միջավայրում հայտերի փոքր քանակը պետք է հիմք դառնա հետագա ուսումնասիրության համար:
- Արդյո՞ք ՀՀ ՊՆ-ն նախկինում աշխատել է այդ հայտատուների հետ: Արդյո՞ք առկա է նախկին համագործակցության արդյունքների գնահատում:
- Արդյո՞ք ընտրված կապալառուն անկեղծորեն առաջարկել է պայմանագրի «լավագույն գին»: Արդյո՞ք առկա է հնարավոր դեմպինգ (ցածր գնի ներկայացում), որի արդյունքում առաջարկվել է ոչ խելամիտ ցածր գին, ինչը կարող է ազդել մատակարարվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վրա և վտանգել գինուժի կողմից իր պարտականությունը կատարելու կարողությունը:
- Արդյո՞ք պայմանագիրը կնքվել է պատասխանատու կապալառուի հետ, որն ունի բավարար կատարողական և բիզնես էթիկայի պատմություն:
- Արդյո՞ք դժգոհություններ կամ մրցույթի հետ կապված բողոքներ ներկայացվել են ՊՆ կամ բողոքներ քննող համապատասխան մարմնին:
- Արդյո՞ք հնարավոր է նույնականացնել իրական շահառուներին և բոլոր նրանց, ովքեր շահելու են պայմանագրերի կնքման արդյունքում: Արդյո՞ք նրանք կապված են ՊՆ, կառավարության պաշտոնյաների կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հետ:
- Արդյո՞ք նրանք կատարել են նվիրատվություններ իշխող կուսակցությանը, կամ արդյո՞ք նրանք լավ կապեր ունեն:
- Արդյո՞ք հայտատուն ՊՆ-ին պատշաճ ժամկետում ներկայացրել է ճշգրիտ և ամբողջական տվյալներ արժեքների կամ գնագոյացման վերաբերյալ: Արդյո՞ք հայտատուն պատշաճ կերպով բաշխել է ծախսերը:

Պայմանագրի կատարման փուլ

- Արդյո՞ք կառավարությունն ունի պայմանագրի կատարումը վերահսկելու համար անհրաժեշտ պատշաճ մեխանիզմ:
- Արդյո՞ք բոլոր փաստաթղթերը հասանելի են գաղտնի տեղեկության հետ աշխատելու իրավունք ունեցող ներքին և արտաքին աուդիտի մարմիններին և խորհրդարանական հանձնաժողովին:
- Արդյո՞ք կապալառուն ենթարկվում է կառավարության կողմից վերահսկողություն իրականացնելու պահանջներին:
- Արդյո՞ք կատարվելիք աշխատանքների շրջանակը, պահանջները կամ ֆինանսական պայմանները փոխվել են, և եթե այո՝ ինչու՞:
- Արդյո՞ք պայմանագիրը որոշակի է, այսինքն փոխհամաձայնեցված են պայմանները, բնութագրերը և գները:

- Արդյո՞ք պայմանագիրը կատարվում է ըստ ժամանակացույցի, և արդյո՞ք ծախսերը նախատեսված բյուջեի սահմաններում են:
- Արդյո՞ք գները և արժեքները որոշակի են, թույլատրելի, վերագրելի և խելամիտ:
- Արդյո՞ք կառավարությունը ստանում է այն ապրանքները և ծառայությունները, որոնց համար կնքվել է պայմանագիրը:
- Որո՞նք են պայմանագրի դադարեցման հնարավոր պայմանները:
- Ինչպե՞ս է ֆինանսավորվում պայմանագիրը:
- Արդյո՞ք պայմանագրով սահմանված վճարները տեղին են, հատկապես, պայմանագրի կնքման, աշխատանքի խրախուսման կամ կատարողականի համար սահմանված վճարները:
- Արդյո՞ք կապալառուները վճարում է իր ենթակապալառուներին:
- Արդյո՞ք ի հայտ եկել են անհատական կամ կազմակերպական շահերի բախման հանգամանքներ, որոնք կարող են կողմնակալ դարձնել պայմանագրի կատարումը:
- Արդյո՞ք բողոքներ ներկայացվել են համապատասխան մարմին:

Պայմանագրի ավարտ

- Արդյո՞ք պայմանագիրը կատարվել է ժամանակին և նախատեսված բյուջեի շրջանակներում:
- Արդյո՞ք պայմանագրային փաստաթղթերի փաթեթը թարմացված է և պատշաճ կազմակերպված:
- Արդյո՞ք կատարվել է պայմանագրի կատարման որակյալ գնահատում:
- Արդյո՞ք կապալառուները կատարել է պայմանագրի բոլոր պահանջները: Ո՞վ է դա ստուգել:
- Արդյո՞ք կառավարությունը պատրաստ է նորից պայմանագրային հարաբերություններ հաստատել տվյալ կապալառուի հետ, արդյո՞ք առկա է կապալառուի կատարողականի վերաբերյալ գրառում, որը հնարավոր կլինի տրամադրել այլոց:
- Արդյո՞ք պայմանագիրը ենթարկվել է աուդիտի, և եթե այո, արդյո՞ք առկա են աուդիտի հաշվետվություններ, որտեղ նշվում է խարդախության, վատնումների և չարաշահումների մասին:
- Արդյո՞ք մնացել են խնդրահարույց կամ չհիմնավորված ծախսեր:
- Արդյո՞ք կառավարությունը ճշգրտորեն է գնահատել կապալառուի գործունեությունը:
- Արդյո՞ք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունման համար պատասխանատու պաշտոնյան ունի դա անելու համար անհրաժեշտ գիտելիքներ, փորձ և որակավորում:
- Արդյո՞ք ՊՆ-ն ունի մատակարարված ապրանքների որակը ստուգելու, անվտանգ և հարմար կերպով պահեստավորելու, այդ ապրանքներն օգտագործող ՊՆ ստորաբաժանումներին դրանք տրամադրելու պատշաճ մեխանիզմներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. ՀՀ սահմանադրություն (1995, նոր խմբագրությունն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերին)
2. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք (1996թ.)
3. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (2003թ.)
4. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք (2014թ.)
5. «Գնումների մասին» ՀՀ օրենք (2016թ.)
6. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք (2017թ.)
7. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» N534-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N2215-Ն որոշում
10. ՀՀ նախագահի 2007թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագիր
11. ՀՀ նախագահի 2007թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» ՆՀ-308-Ն հրամանագիր

ՀՀ պաշտոնական կայքեր և տվյալների շտեմարաններ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, <https://www.sns.am>
2. ՀՀ կառավարություն, <https://www.gov.am>
3. ՀՀ հաշվեթևիչ պալատ, <https://armsai.am>
4. ՀՀ պաշտպանության նախարարություն, <http://www.mil.am>
5. ՀՀ վարչապետ, <https://www.primeminister.am>
6. ՀՀ քննչական կոմիտե, <https://www.investigative.am>
7. ՀՀ գնումների էլեկտրոնային համակարգ, <http://www.armeps.am>
8. ՀՀ գնումների պաշտոնական տեղեկագիր, www.gnumner.am
9. ՀՀ դատական տեղեկատվական համակարգ, <http://www.datalex.am>
10. ՀՀ իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստր, <https://www.e-register.am>
11. ՀՀ պաշտոնական հայտարարություններ, <https://www.azdarar.am>
12. ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» հանդես, <http://www.hayzinvor.am>

Հայաստանյան բիզնես տեղեկատուներ

1. 374, <https://374.am>
2. Դեղին էջեր, <https://www.yell.am>
3. Սփյուռ, <https://www.spyur.am>

Այլ կայքեր և հետազոտական զեկույցներ

1. Գլոբալ ֆայրփաուեր, <https://www.globalfirepower.com>
2. Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագիծ, <https://www.occrp.org>
3. Կենտրոնական Ասիայի – Կովկասի վերլուծական հանդես, <http://www.cacianalyst.org>
4. Կենտրոնական հետախուզական գործակալություն, <https://www.cia.gov>
5. Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն, <http://policyobserver.am>
6. Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտ, <https://www.sipri.org>
7. ԹԻՅԿ և Էյ-Էմ Փարթներս, *Գործարարների շրջանում տնտեսական մրցակցության ընկալման սոցիոլոգիական հետազոտություն*, 2020թ., <https://transparency.am/files/publications/1582712146-0-567954.pdf?v=4>
8. ԹԻՊԱ, *Կառավարության՝ պաշտպանության օրինավորության համաթիվ*. Հայաստան, 2020թ., <https://ti-defence.org/qdi/countries/armenia>
9. ԹԻՊԱ և ԹԻ-Ուկրաինա, *Վեց կարմիր դրոշակ. Ուկրաինայի պաշտպանության բնագավառի գնումներում առավել հաճախակի հանդիպող կոռուպցիոն ռիսկերը*, 2018թ., https://www.transparency.org.uk/sites/default/files/pdf/publications/Ukraine_Six_Red_Flags_Enq.pdf

Մամուլ

1. Ազատություն ռադիոկայան, <https://www.azatutyun.am>
2. Առավոտ, <https://www.aravot.am>
3. Արմդեյլի, <https://armdaily.am>
4. Արմենիա Սպուտնիկ, <https://armeniasputnik.am>
5. Ի-Վի-Էն ռեփորթ, <https://www.evnreport.com>
6. Իրատես, <http://www.irates.am>
7. Հետք, <https://hetq.am>
8. Պանորամա, <https://www.panorama.am>
9. Սիվիլնեթ, <https://civilnet.am>
10. Ֆակտոր, <https://factor.am/196539.html>
11. 1-ին, <https://www.1in.am>